

## ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆ ՅԱՄՈՁՈՒԱԾ ՉԷ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՈՒՇԱՅԱԾ ՔԱՅԼԵՐՈՎ

Հայաստանի ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) առաջնորդ Ստեփան Դեմիրճեանի համոզմամբ, վերջին կարգաչին փոփոխություններով ու երկրէն ներս տարածուած արատաւոր երեւոյթներու մասին խօսելով Սերժ Սարգսեան կը փորձէ շահիլ հասարակութեան վստահութիւնը, ստանալ ժողովրդի համակրանքը եւ իշխանութեան «դիմագիծը» փոխել: Բայց ընդդիմադիր գործչի համոզմամբ, Սերժ Սարգսեանի այս քայլերը ուշացած են:



ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեան

«Օրինակ՝ ի՞նչ է նշանակում խօսել հիմա թիկնապահների շքանդակի մասին: Վաղուց արդէն այդ այլանդակ երեւոյթը ուղղակի նողկանք է առաջացնում հասարակութեան մէջ», - մամուլի հետ հանդիպման ընթացքին յայտարարեց Դեմիրճեան: - «Կամ խօսում էր «գրօ անհանդուրժողականութեան» մասին գողութեան նկատմամբ, կոռուպցիայի նկատմամբ: Բայց մինչեւ հիմա եղել է հարիւր տոկոս հանդուրժողականութիւն ընտրողների ձայները գողացողների նկատմամբ: Դրանք էլ են՝ չէ՞ գող»:

Անցած շաբաթ Սերժ Սարգսեանի նախաձեռնութեամբ կարեւոր փոփոխություններ կատարուեցան կառավարութեան կազմէն ներս: Այս փոփոխություններէն յետոյ, Սարգսեան հանդէս եկաւ ընդարձակ ծրագրային ելոյթով, քննադատելով Հայաստանի մէջ տարա-

ծուած արատաւոր երեւոյթները, անդրադառնալով երկրի ներքաղաքական կեանքին: Սերժ Սարգսեանը, մասնաւորապէս իր ելոյթին մէջ ընդդիմութիւնը բաժանած էր երեք խումբի՝ առաջին խումբին մէջ դասելով երկրի եւ ժողովուրդի բախտով անկեղծօրէն մտահոգ անհատները, իսկ միւս երկու խումբերը քննադատած էր, ըսելով, թէ անոնք միայն կը խօսին իշխանափոխութեան մասին, ցեխ կը շարտեն Հանրապետական կուսակցութեան վրայ եւ կը վարկաբեկ Հայոց բանակը:

Շաբ.ը էջ 4

## ԵՐԱՄԻՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՅՈՒՈՒԾ Է ՅԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐՑԵՐՈՎ

«Ազատութիւն» ռատիոկայանին տրուած հարցազրոյցի մը ընթացքին Եւրամիութեան ընդարձակման եւ եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան հարցերով յանձնակատար Շտեֆան Ֆիւլէ յայտարարած է որ, Հայաստանի մէջ Եւրամիութեան ամէնէ աւելի մտահոգող խնդիրներէն մէկը մարդու իրաւունքներու պաշտպանութիւնն է եւ ժողովրդավարութեան զարգացումը:

«Մարդու իրաւունքներու պաշտպանութիւնը մեզ մտահոգող ամենակարեւոր հարցերէն մէկն է, եւ ես ուրախ եմ, որ Հայաստանի իշխանութիւնները համաձայնած են Եւրամիութիւն - Հայաստան յարաբերութիւններու շրջանակէն ներս ստեղծել ենթայանձնաժողով՝ մարդու իրաւունքներու պաշտպանութեան շուրջ: Այս կարեւոր խնդիր է: Կարեւոր է, որ երկու տարի առաջ տեղի ունեցած իրադարձութիւններու ողբերգական չիւղղութիւնները մնան ետեւ», - ըսած է եւրոպացի բարձրաստիճան պաշտօնեան, շեշտելով. - «Նկատի ունիմ՝ ոչ թէ մոռացութեան մատնել զանոնք, այլ պահելով չիւղղութեան մէջ՝ առաջ երթալ, ազատ արձակել անոնց, որոնք տակաւին անազատութեան մէջ են՝ մարտիմէկեան իրադարձութիւններու առնչութեամբ»:

Ֆիւլէի կարծիքով, ժողովրդավարական բարեփոխումները ու անտեսական դաշտը ազատակա-



Եւրամիութեան յանձնակատար Շտեֆան Ֆիւլէ

նացնելու ուղղութեամբ անհրաժեշտ քայլերը կարեւոր են ոչ միայն Հայաստանի կայուն զարգացման, այլեւ՝ Եւրամիութեան մերձեցումը եւ այդ դաշինքին քաղաքական, տնտեսական ու ֆինանսական օգնութիւն ստանալու համար:

«Կարծեմ կարեւոր է ընդունիլ, որ, օրինակ, Արեւելեան գործընկերութեան ծրագիրը, որ մենք առաջարկած ենք յետխորհրդային վեց պետութիւններուն, անոնց շարքին Հայաստանին, արդարամիտ առաջարկ է եւ առիթ՝ իրագործելու սեփական նպատակները՝ բարեփոխումներու եւ յառաջընթացի ճանապարհով: Մեզ համար չկան առաջնային կամ երկրորդային կարեւորութեան երկիրներ, որոնց մենք պատրաստ ենք աւելին տալ՝ միւսներու համեմատ,

Շաբ.ը էջ 4

## ՅԱՅԱՍՏԱՆԵՆ ՄԵԿՆՈՂՆԵՐՈՒ ԹԻԲԸ 19.8% ԱԻԵԼՑԱԾ Է «ԱՐՏԱԳԱՂԹԸ ԶԱՐՅՈՒՐԵԼԻ ՉԱՓԵՐԻ Է ՅԱՍԵԼ»

Պաշտօնական տուեաններու համաձայն 2010 -ին Հայաստանէն մեկնողներու թիւը 19,8%-ով գերազանցած է ժամանողներուն:

Ըստ ՀՀ տարած քայլին կառավարման նախարարութեան Գաղթականական Պետական Ծառայութեան հրապարակած տուեաններուն, այս տարուայ Յունուար-Նոյեմբեր ամիսներուն մեկնողներու թիւի գերազանցումը ժամանողներու թիւին, նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի հետ համեմատ աւելցած է 7,7 հազարով կամ 19,8 %-ով եւ կազմած է 46,3 հազար մարդ:

Դեկտեմբեր 27-ին «Հայելի» ակումբէն ներս տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ժամանակ ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի գրականութեան ինստիտուտի փոխտնօրէն, գրականագէտ Վարդան Դեւրիկեան յայտնած է, որ հարցերու հարցը, բացասական առումով կը մնայ արտագաղթը, որը հիմա արդէն որակապէս այլ է: «Եթէ 1990-ական թուականներուն մարդիկ գնում էին, որովհետեւ պատերազմ էր, ապա այսօրուայ արտագաղթի սարսափելին այն է, որ

երիտասարդութիւնն է գնում, ինտելեկտուալ միտքն է գնում»:

Ան յայտնած է, թէ ներկայ արտագաղթի դժբախտութիւնը այն է, որ ոչ միայն պատրաստուած մտաւորական գանգուածը կը լքէ հայրենիքը, այլ նաեւ այն հանգամանքը, որ այստեղ գիտութեան զարգացման համար համապատասխան միջավայր չկայ եւ երիտասարդները Հայաստանի մէջ ապագայ չեն տեսներ:

Նոյն օրը, լրագրողներու հետ հանդիպման ընթացքին գրականագէտ Դաւիթ Գասպարեան ըսած է, թէ այս տարուայ ընթացքին Հայաստանի մէջ եղած են տեղաշարժեր եւ փոփոխություններ եւ ընդհանրապէս 2010-ը եղած է լարուած տարի:

«Ամենահաւեր բանը՝ որ արտագաղթը շարունակուած է, գարհուրելի չափերի է հասել: Ժողովուրդն իր հայրենիքում պէտք է ապահովուած զգայ իրեն: Դժբախտաբար՝ չի գտնւում: Այս խնդիրներն ամենամտահոգիչն են գրողի, գրական կեանքի, ընդհանրապէս հանրային կեանքի համար», - աւելացուցած է գրականագէտը:

## ՈՉ ԵՄ Է ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶԵԱՆ

Խոր վիշտով իմացանք մահը հայ մշակուցի պատկառելի դէմքերէն, վաստակաշատ գրող Ստեփան Ալազազեանի մահը, որ տեղի ունեցած է Դեկտեմբեր 22, 2010-ին, Կլենտէյլ, Քալիֆորնիա, ուր հանդերձ ընտանեօք բնակութիւն հաստատած էր 1991-էն ստղին:

Հայկազ ծնած (Յունուար 3, 1924), ընտանեօք հայաստան ներգաղթած եւ իր բարձրագոյն ուսումը (բանասիրական) Երեւան ստացած՝ աւելի քան 27 գիրքերու հեղինակ, երբեմնի Հայաստանի գրողներու նախագահ Ստեփան Ալազազեան, հանդիսացաւ մեր այն հազուագիւտ գրողներէն մին, որուն կենսագրութիւնը անցաւ իր ժողովուրդի ու ժամանակի պատմութեան միջով:

Ան, իբրեւ հայ գրող, ստեղծագործող միտք, եւ մշակուցի նուիրեալ ծառայ ինչպէս ինք պիտի վկայէր «Հայ Մամուլի էջերում» 2008թ լոյս ընծայած իր գրքին մէջ, նաեւ եղած էր կոչումով հասարակական գործիչ մը: Ան «ծառայելով արուեստին՝ արուեստը կը ծառայէցնէր իր ժողովուրդի ու հայրենիքի վեհ



նպատակներին»:  
«Մասին» շաբաթաթերթի խմբագրական մարմինն ու վարչական կազմը կը սգան բազմատաղանդ գրագէտին՝ Ստեփան Ալազազեանի դառնաղէտ մահը եւ այս տխուր առիթով իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն ընտանեկան բոլոր պարագաներուն:

# ՏԱՐԻՒՅ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՐԵՔ ՏԱՌՈՎ

## ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Անցնող տարին ամփոփելն, իհարկէ, սուրբ գործ է: Իշխանութիւնները, բնականաբար, ամենայն պատասխանատուութեամբ են մօտենում այդ գործին: Նախօրոք մի քանի անգամ կարողում են օգնականների գրած տեքստերը, խնամքով սափրուում են, տեսախցիկների առջեւ համապատասխան կեցուածք են ընդունում, գրիմ են անում եւ այլն: Արդիւնքում՝ այնքան էլ վատ չի ստացում: Ինչո՞ւ: Որովհետեւ ժամանակ չկայ. պաշտօնեաները պիտի արագ-արագ ընթերցեն իրենց տեքստերը եւ շտապեն ամանորեայ հանգիստն անցկացնել Շուկայարիայում, Իտալիայում կամ (ծայրայեղ դէպքում) Դուբայում: Եթէ լաւ չկարողան, մէկ էլ տեսար՝ ուշացան ինքնաթիռից, իսկ դա արդէն լրացուցիչ ծախսերի հետ է կապուած: Այստեղից էլ՝ ընթերցող տեքստերի բարձր պրոֆեսիոնալիզմը:

Նշանակու՞մ է սա արդեօք, որ

անցնող տարում իշխանութիւնները նաեւ խուճապի մէջ ընկնելու առիթ ունեցան, ամուսնը ձուլն է ժամացաւ: Բայց իշխանութիւնները, պէտք է խոստովանել, կայծակնային արագութեամբ յաղթահարեցին այս ազգակործան վտանգը. շատ արագ յանձնաժողով ստեղծեցին, վարոյթ յարուցեցին, խնդրին համազգային հնչեղութիւն տուցին, եւ արդիւնքում ճգնաժամը յաղթահարուեց. ձուլն կրկին թանկացաւ: Ընդ որում, դրական այս միտումը շարունակուում է: Եւ ընդհանրապէս, անցնող տարում Հայաստանին յաջողուեց գնաճի տեմպերով առաջատար դիրքեր զբաղեցնել աշխարհում, իսկ այդ գնաճը հիմնաւորելու ջանքերի առումով Տիգրան Սարգսեանը ոչ միայն բացառապէս առաւելութեամբ լաւագոյնը ճանաչուեց աշխարհում, այլեւ աշխարհի մի շարք առաջատար կրկնաներից մշտական աշխատանքի հրահանգատ:

Անցնող տարի բարենպաստ

## Մի խօսքով, տարին յաջողուած էր: Մնում է յուսալ, որ գալիք տարում մեզ այնուամենայնիւ կը յաջողուի կասեցնել այս յաջող ընթացքը

իրականում ամփոփելու բան չկայ: Իհարկէ չի նշանակում: Ժիշդ հակառակը՝ Հայաստանի «կենսագործունէութեան» ցանկացած ոլորտ կարելի է ամփոփել ընդամէնը մէկ նախադասութեամբ, աւելին՝ ընդամէնը մէկ բառով: Ընդ որում, եւ հայերէնում, եւ ուսուցիչներում այդ բառը կ'ունենայ ընդամէնը երեք տառ: Բայց քանի որ մենք հեռու ենք նման ծայրայեղ մօտեցումներից, կը փորձենք այնուամենայնիւ փոքր-ինչ աւելի հանգամանորէն ամփոփել տարին:

Եւ այսպէս, արտաքին քաղաքական ոլորտ: Այստեղ տեղի ունեցան միանգամից մի քանի կարեւորագոյն իրադարձութիւններ:

Առաջին՝ հզուարդ Նալբանդեանի թշնամիքը որեւէ հակափորձութեան չենթարկուեցին:

Երկրորդ՝ Պզոն ձերբակալուեց:

Երրորդ՝ ինտերնետում յայտնուեցին կարգեր, որտեղ ԱՄՆ փոխնախագահը տեղեկացնում է, որ Սերժ Սարգսեանն ինքն է խնդրել ցեղապանութեան ճանաչման հարցում շատ չչտապել:

Չորրորդ՝ Սերժ Սարգսեանը յայտարարեց, թէ փիս նեղացել է եւ չի մասնակցելու ՆԱՏՕ-ի գազաթնաժողովին: Բոլոր այս իրադարձութիւններն, ինքներդ էլ հասկանում էք, հակասորէն ամբարակեցին Հայաստանի միջազգային դիրքերը:

Տնտեսական ոլորտ: Տարին, անկասկած, խիստ բարենպաստ էր Հայաստանի համար: Բնակչութեան կենսամակարդակը կտրուկ աճեց: Պանիրը կրկնակի թանկացաւ: Բոլորը միաբերան յայտարարեցին, որ պատճառը կաթի թանկացումն է: Յետոյ ուսումնասիրութիւնները ցոյց տուցին, որ պանրի մէջ ինչ սասն կայ (կաթի փոշի, սոդա, ժաւելի սպիրտ, կալիումի պերմանգանատ), բացի կաթից, բայց դա հակառակ է: Կարեւորը՝ յանձնաժողովը քրտնաջան աշխատեց: Եւ այնուամենայնիւ,

էր նաեւ ներքաղաքական կայունութեան պահպանման առումով: Իշխանութիւններին յաջողուեց բացառապէս միանգամից մի քանի մասնական դաւադրութիւններ եւ եթերից գրկել «ԱԼՄ»-ը «ԳԱԼԱ» հեռուստաընկերութիւններին՝ միաժամանակ պատշաճ հիմնաւորումներով կանխելով «Ա.1+»-ի ազգակործան ջանքերը: Ընդ որում, այդ ընթացքում իշխանութիւնները համարձակութիւն ունեցան անկեղծ երկխօսութեան մէջ մտնել ժողովրդի հետ եւ առանց որեւէ բան թաքցնելու ներկայացնել առկայ իրողութիւնները, ինչի արդիւնքում էլ նախագահի աշխատակազմի ղեկավարն օգտագործեց «այ համբալ» ձեւակերպումը: Այդ ընթացքում իշխող կուսակցութիւնը նաեւ մաքրեց շարքերը՝ որպէս ֆիլտր օգտագործելով արարողակարգի աշխատակազմի այտերը, ինչն իսկապէս կարելի է ներիշխանական գոնաւոր յեղափոխութիւն անուանել, որովհետեւ պարզուեց՝ եթէ սեւը կարմրացնում է արարողակարգի աշխատակցի այտը, արդիւնքում մեր վարդազոյն մայրաքաղաքն ունենում է կապոյտ երկնքի պէս գուլալ քաղաքապետ:

Ինչ վերաբերում է մշակութային կեանքին, ապա անցնող տարին իսկապէս բացառիկ էր: Ազգային ինքնութիւնն այստեղ արձանագրեց միանգամից մի քանի նուաճումներ. ընդունուեց օտարալեզու դպրոցների մասին օրէնքը, թողարկուեց Վլէի չորրորդ ձայնասկաւառակը, եւ, որ ամենակարեւորն է, ԱՊՊԱ-ի գովազդն իսլամական կոնֆեդերացիայի կողմից ճանաչուեց լաւագոյնը:

Մի խօսքով, տարին յաջողուած էր: Մնում է յուսալ, որ գալիք տարում մեզ այնուամենայնիւ կը յաջողուի կասեցնել այս յաջող ընթացքը:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

# ՏԱՐԻՆ, ՏԱՐԵԳԻՐՆԵՐԸ, ՎԻՃԱԿԸ, ԾԱՇԻՃԸ

## ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Տարեվերջ է, եւ բոլորը փորձում են տարի ամփոփել: Դրանով են այս օրերին լցուած երեւանեան մամուլի ակումբները, նախարարութիւնների ասուլիսների սրահները, հեռուստաթերթը, ռադիոթերթը, մամուլը: Գրեթէ բոլորը քաղաքական գործիչներին, ընդ որում յաճախ առանց խորականութեան, դիմում են տարին ամփոփելու նոյն հարցով: Մինչդեռ այդ հարցերը ստացող գործիչների մէջ շատերն այնպիսին են, որ նրանք ոչ թէ պէտք է իրենք տարի ամփոփէին մամուլի համար, այլ պէտք է լինէին տարուայ ամփոփման վիճակագրական արտաչափում, քաղաքական եւ մամուլի դաշտից վերջապէս դուրս մնալով տեսքով:

Բայց նրանք տարի են ամփոփում, ու դեռ երկար կ'ամփոփեն, ու գուցէ յաջորդ տարին էլ կ'ամփոփեն, միւսն էլ, 2013-ն է, եւ էլի մի 5 կամ 10 տարի: Բայց ում է դա հետաքրքիր: Օրինակ, ում կարող է հետաքրքիր լինել ասենք խորհրդարանի ՀՀԿ խմբակցութեան ունեւ մի անդամի տարուայ ամփոփումը, կամ ում կարելի է հետաքրքիր լինել ունեւ մի նախարարի՝ լինի դա ՀՀԿ-ական, ԲՀԿ-ական, թէ ՕԵԿ-ական, տարուայ ամփոփումը: Կամ թէկուզ երկրի նախագահի կամ վարչապետի ամփոփումն ում կարող է հետաքրքիր լինել:

Այդ ամէնը հետաքրքրութիւն եւ արժէք կարող է ներկայացնել երեւի թէ միայն այն դէպքում, երբ երկրում գործում է Սահմանադրութիւնը, օրէնքները, ապահովում են մարդու իրաւունքներին եւ քաղաքացիական ազատութիւնների սահմանադրական եւ օրինական շրջանակները, տնտեսական եւ քաղաքական մրցակցային պայմանները: Դրանք այն զլխաւոր չափանիշներն են, որով պէտք է չափուի կեանքը, որոնք պէտք է լինեն տարիների ամփոփման չափանիշ:

Հայաստանում այդ ուղղութեամբ որեւէ հակառակ քայլ, որը նշանակալիօրէն կը փոխէր իրավիճակը, չի կատարուել. Սահմանադրութիւնը շարունակում է յարգուել միայն իշխանութեանը պէտք եղած դէպքում, օրէնքները շարունակում են կիրառուել միայն իշխանութեանը պէտք եղած դէպքում, իշխանութիւնը շարունակում է սերտաճած լինել իշխանութեան հետ, շարունակում են իրենց ապահով, հանգիստ ու գերշահութաբեր գործունէութիւնը մենատէրերն ու օլիգոպոլիտների տէրերը, քաղաքատարկեալները շարունակում են բանտերում մնալ, հեռուստաթերթը շարունակում է աշխատել միայն իշխանութեան օրակարգով, ուժային կառույցները շարունակում են ճնշել քաղաքական այլախոհութեան քիչ թէ շատ վտանգաւոր որեւէ ակցիա:

Էլ ինչ տարուայ ամփոփում, էլ ում ամփոփածը կարող է որեւէ արժէք ներկայացնել մի երկրում, որտեղ արժէքն ընդամէնը «գողական» կամ «տղայական» պայմանաւորութեանն են, կլանային, թայֆայական մտածողութիւնը, իսկ իշխող «էլիտայի» համար՝ վերարտադրութեան մեխանիզմի կատարելագործումը, յղկումը եւ ֆինանսական ապահով-

## Ուսածութիւնը:

Էլ ինչ ուղղում է կատարուած լինի երկրում, դա, մեծ հաշուով, գոնէ տարուայ կտրուածքով, որեւէ նշանակութիւն չունի: Իսկ թէ ինչ նշանակութիւն կարող է ունենալ տեղի ունեցած անցուղարձն աւելի երկար ժամանակի կտրուածքով, դա այդ ժամանակն էլ ցոյց կը տայ: Երեւի թէ հենց այդ առումով էր տարին նշանակալից, որ ստեղծուել է մի իրավիճակ, երբ Հայաստանում տեղի ունենալիքն այլեւս ունեւ մեկի «խելքի» բանը չէ՝ թէ իշխանութեան, թէ ընդդիմութեան, եւ նրանցից որեւէ մէկը մեծ հաշուով չի պատկերացնում, թէ ինչ է լինելու յետոյ, ինչ են ստիպուած լինելու անել:

Մեծ հաշուով, դա իհարկէ վատ է, երբ երկրի համար կարեւոր նշանակութիւն ունեցող ներքաղաքական պրոցէսները թեւադրուում են առաւելապէս արտաքին գործօններով, ազդուում են առաւելապէս դրանցից, թէեւ երկրի ներսում կարծես թէ կան բաւականաչափ գործօններ, որոնք կարող էին բաւական դինամիկ ներքաղաքական պրոցէսներ թելադրել: Բայց, թէեւ լաւ չէ, որ պրոցէսներն առաւելապէս գտնուում են արտաքին շարժերի ազդեցութեան տակ, այդուհանդերձ առկայ վիճակում, Հայաստանի քաղաքական «էլիտա» կոչուածի ներկայիս որակական կազմի պարագայում, ընդ որում թէ իշխանութեան, թէ ընդդիմութեան դէպքում, իհարկէ առանձին բացառութիւններով հանդերձ, լաւ է գոնէ, որ արտաքին պրոցէսները նրանց կարող են պարտադրել գնալ ինչ որ քայլերի, այլապէս ճահիճը Հայաստանում մի քանի հազար տարի յետոյ կարող էր տեղ գտնել «Արեւիի ռեկորդները» գրքում:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՇԵԱՆ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԻԷՆ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹՇԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՇԵԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

«2012-ին ԱԺ-ՈՒՄ ՅԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԿԸ ԼԻՆԵՆ ՅՅԿ-Ն, ԲՅԿ-Ն ԵՒ ՅԱԿ-Ը»

Հայաստանում 2010-ի քաղաքական կեանքում իշխանութիւնների եւ ընդդիմութեան միջեւ ձեւաւորուած «դիրքային պայքարը» կը շարունակուի նաեւ չափորդ տարում: Նման համոզմունք ասուլիսի ժամանակ յայտնեց քաղաքագետ Սուրէն Սուրէնեանցը: Ըստ նրա՝ 2011-ը նախընտրական տարի է՝ 2012-ի խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ, եւ իշխանութեան եւ ընդդիմութեան ճամբարներում որոշակի դրսեւորումներ կը լինեն: Մասնաւորապէս՝ իշխանական թեւում Սերժ Սարգսեանը, նախապատրաստելով նաեւ 2013-ի նախագահական ընտրութիւններին, նոր թիւ կը ստեղծի, որի նախադրեալները ակնառու են նաեւ այս տարեվերջեան փոփոխութիւնների համատեքստում:

Խորհրդարանական ընտրութիւններում քաղաքագետը հաւանական է համարում ՀՀԿ, ԲՀԿ եւ ՀԱԿ քաղաքական ուժերի կողմից խմբակցութիւնների ստեղծումը, իսկ ՕԵԿ-ին ԱԺ-ում նա չի տեսնում՝ համարելով նրան քաղաքականապէս սպառուած ուժ: Սուրէնեանցը համոզուած է նաեւ, որ ԲՀԿ-ն կտալիցիան չի լքի եւ կը պահպանի գործընկերային յարաբերութիւնները ՀՀԿ-ի հետ: Ինչ վե-

րաբերում է նախագահական ընտրութիւններին, ընդդիմութեան գլխաւոր քաղաքական ուժ համարուող Հայ ազգային կոնգրէսից կ'առաջադրուի Լեւոն Տէր-Պետրոսեանը, այն էլ՝ միայն արտահերթ ընտրութիւններ լինելու դէպքում:

«Հերթական նախագահական ընտրութիւններում Տէր-Պետրոսեանի թեկնածութեան առաջադրումը անհավանական է 2 պատճառով. նախ դժուար կը լինի հաւաքել հասարակութեան այն զանգուածին, որն ակտիւ էր նախորդ նախագահական ընտրութիւնների ժամանակ, եւ 2-րդ՝ 2013-ի ընտրութիւններում ՀԱԿ-ի գործողութիւնների վրայ մեծ ազդեցութիւն կ'ունենայ նաեւ դրանց նախորդող խորհրդարանական ընտրութիւնների անցկացման որակն ու արդիւնքը», - աւելցրեց նա:

Սուրէնեանցի կարծիքով՝ ներկայիս քաղաքական կեանքի զարգացումները հաշուի առնելով՝ նախագահի արտահերթ ընտրութիւններ Հայաստանում չեն անցկացուի, դա հնարաւոր է միայն ֆորս-մաժորային իրավիճակների, մասնաւորապէս՝ ԼՂ հարցի հետ կապուած որոշ իրադարձային փոփոխութիւնների դէպքում:

ՍՈՑԻԱԼ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ 300 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ ԅՈՒՆԻՄԱՐԻ 1-ԻՑ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ԿԸ ԴԱՌՆԱՆ



Իշխող Հանրապետական կուսակցութեան անդամները կը բողոքեն աշխատանքի ազատուելու առթիւ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարութեան Սոցիալական ապահովութեան պետական ծառայութեան աշխատակիցները երկուշաբթի, Դեկտեմբեր 27-ին բողոքի ցույց էին կազմակերպել Կառավարութեան շէնքի դիմաց:

Հայաստանի կառավարութիւնը որոշել է 2011 թուականի Յունուարի 1-ից լուծարել Սոցիալական ապահովութեան պետական ծառայութեան աշխատակազմի վճարումների ծառայութիւնը, որի արդիւնքում ծառայութեան 300 աշխատակից գործազուրկ կը դառնան:

Այս մասին ընդամէնը մէկ շաբաթ առաջ իմացած կենսաթոշակ բաժանող տեսուչները բողոքի ցույց անցկացրին նախ իրենց ծառայութեան գրասենեակի առջեւ, ապա շարժուեցին դէպի նախագահի նստավայր, իրենց անամակը յանձնեցին նախագահին, այնուհետեւ բողոքի ակցիան շարունակեցին Կառավարութեան շէնքի դիմաց՝ պահանջելով վերանայել կայացրած որոշումը:

«Ես իմ ընտանիքի միակ կերակրողն եմ, ունեմ երկրորդ կարգի հաշմանդամ եւ ապրում եմ վարձով: Եւ բոլորը նոյն կարգավիճակում են,

այսօր Նոր տարուայ շեմին մեզ նուէր են ուղարկել», - բողոքեց աշխատակիցներից մէկը:

Նրանք բոլորը իշխող Հայաստանի հանրապետական կուսակցութեան անդամներ են: Բոլորը մէկ մարդու պէս նախագահական ընտրութիւնների ժամանակ համալրել են կուսակցութեան շարքերը եւ վրդովուած ասում են, թէ կը պատուեն կամ կը յանձնեն իրենց անդամատոմսերը, քանի որ «օգտագործուել եւ չպարտուել են դուրս իրենց իսկ կուսակցութեան ձեռքով»:

«Մի գիշերուայ մէջ իրենց պէտք էր, որ 300 հոգի դառնան Հանրապետական կուսակցութեան անդամ, այսօր իրենց պէտք է նաեւ 300 հոգին կուսակցութիւնում, շարտում են դուրս», - ասաց տեսուչներից մէկը՝ յաւելելով, որ 300 հոգին իր հետ կուսակցութիւն է բերել է 900 հոգու՝ իր ընտանիքի անդամներին կամ միւս բարեկամներին:

«Ստիպում էին, որ ձայն հաւաքենք Հանրապետական կուսակցութեան համար, եթէ չէ՝ ուրեմն չենք կարող աշխատել, իսկ այսօր գրչի մի հարուածով բոլորիս հանեցին դուրս», - ասաց մէկ այլ աշխատակից:

ԲԱԳՐԱՏ ԱՍԱՏՐԵԱՆԸ ԳՆԱԾԻ ՅԱՄԱՐ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ՄԵՆԱՇՆՈՐՅ ԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻՆ

Կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրեանի գնահատմամբ, այս տարի Հայաստանում արձանագրուած բաւականին բարձր գնաճի՝ գների բարձրացման, պատճառը մենաշնորհներն են:

«Թիւ մէկ պատճառը դա մեր տնտեսական համակարգն է եւ, մասնաւորապէս, այո՛, մենաշնորհները եւ իշխանութիւնների անկարողութիւնը՝ որեւէ ինդիք կարգաւորել այս երկրում: Մենք ունենք մենաշնորհների, գների կարգաւորման ինչ-որ հաստատութիւններ, բայց դրանց գործունէութեան արդիւնաւէտութիւնը՝ չի էլ կարելի գնահատել: Փաստի արձանագրում եւ խղճուկ տուգանքները, որը կիրառուում է, լուծում չէ», - լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց Ասատրեանը:

Ազգային վիճակագրական ծառայութեան հրապարակած վերջին տուեալների համաձայն 2010 թուականի առաջին տասնմէկ ամիսներին Հայաստանում գնաճը կազմել է 8.1 տոկոս:

Կենտրոնական բանկի նախկին նախագահի ներկայացմամբ, այս տարի Հայաստանում գնաճը կը հասնի մօտ 10 տոկոսի, ինչը 1997-ի ցուցանիշից յետոյ երկրորդ ամենավատ տուեալն է անցած 15-16 տարիների ընթացքում:

Ասատրեանի խօսքով, պէտք է հաշուի առնել նաեւ այն, որ անցած տարուայ Դեկտեմբերի համեմատ դրամը արժեւորուել է՝ ԱՄՆ դոլարի, եւրոյի եւ ռուսական ռուբլու նկատմամբ (Կենտրոնական բանկի տուեալներով դրամը ԱՄՆ-ի դոլարի նկատմամբ արժեւորուել է 5.22 տոկոսով, եւրոյի նկատմամբ՝ 14.68, ռուսական ռուբլու նկատմամբ՝ 6.84 տոկոսով):

Կենտրոնական բանկի նախ-



Կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրեան

կին նախագահը ընդգծեց, որ պաշտօնեաները որպէս գնաճի հիմնական գործօն նշում են միջազգային գների, մասնաւորապէս, հացահատիկի գների աճը: - «Բայց արի ու տես, որ այս պարագայում, կարծես թէ, պէտք է չհզոքացուած լինէր այդ աճը: Հացահատիկի մեր շուկան ձեւաւորում է ներմուծումը Ռուսաստանից եւ Եւրոպայից: Եթէ դրամը ռուսական ռուբլու նկատմամբ արժեւորուել է աւելի քան 7 տոկոսով, եւրոյի նկատմամբ 15 տոկոսով, ապա ներկրող հացահատիկի գնի աճը մեր երկրում պէտք է լինէր ցածր», - յայտարարեց Բագրատ Ասատրեանը՝ եզրակացնելով. - «Եթէ տարուայ ընթացքում դրամը արժեւորուել է, իսկ գներն էլ աճել են, ապա պարզ է դառնում, որ Հայաստանում մենաշնորհ դիրքեր ունեցող ներկրողները ուղղակի գումար են աշխատել»:

Խօսելով այս տարուայ առաջին 11 ամիսներին Հայաստանում գրանցուած 2.6 տոկոս տնտեսական աճի մասին՝ Բագրատ Ասատրեան ասաց, թէ պէտք է ի նկատի ունենալ, որ անցած տարին Հայաստանը փակել է 14.4 տոկոս տնտեսական անկմամբ:

ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆԸ ԵԹԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ «ԳԱԼԱ» ԶԵՌՈՒՄՍԱԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԶԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՉՍՏԱՑԱԻ

Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովը օրը հրապարակեց Շիրակի մարզում թուալին ցանցի միջոցով հեռարձակում իրականացնելու համար յայտարարուած լիցենզիայի մրցույթի արդիւնքները: ՀՌԱՀ-ը 14 միաւոր գնահատեց Գիւմրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերութեան յայտը, եւ յաճախութեան համար պայքարում յաղթեց Գիւմրիի «Յայգ» հեռուստաընկերութիւնը, որի յայտը գնահատուել է 42 միաւոր:

Մրցույթի արդիւնքների հրապարակմանը «ԳԱԼԱ» հեռուստաընկերութիւնից ոչ ոք չէր մասնակցում:

«Այլ որոշում չէինք էլ սպասում: Դեռեւս երկու ամիս առաջ ասացինք, որ կը լինի քաղաքական որոշում, եւ պարզ էր, թէ ինչ որոշում կը լինի՝ հաշուի առնելով ՀՌԱՀ-ի նախորդ բոլոր որոշումները», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարեց «ԳԱԼԱ» հեռուստաընկերութեան սեփականատէր Վահան Խաչատրեանը:

ԳԱԼԱ հեռուստաընկերութիւնը 2007 թուականից ի վեր,



երբ հեռարձակեց Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելույթը, մի շարք ինդիքներ է ունեցել հարկային եւ մաքսային մարմինների հետ: Հեռուստաընկերութեան նկատմամբ գործադրուած ճնշումները իրենց զեկոյցներում դատապարտել են միջազգային հեղինակաւոր այնպիսի կազմակերպութիւններ, ինչպիսիք են Freedom House-ը, Amnesty International-ը եւ այլն:

Անկախ մրցույթի արդիւնքներից, «ԳԱԼԱ» հեռուստաընկերութիւնը մինչեւ 2015 թուականը անալոգային եղանակով կը շարունակի եթեր հեռարձակուելը: Դա վերաբերում է բոլոր այն մարզային հեռուստաընկերութիւններին, որոնք թուալին հեռարձակման լիցենզիա չեն ստացել:

# ԼՈՒՐԵՐ

## ԱՐՄԱԴԻՆԵԺԱԴ.

### ԻՐԱՆԸ ԼԱՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ Ե՛Ր ՐԱՅԱՍՏԱՆԻ, Ե՛Ր ԱԴՐԲԵՋԱՆԻ ՐԵՏ

Իրանի Իսլամական Հանրապետությունը լաւ յարաբերութիւններ ունի ինչպէս Հայաստանի, այնպէս էլ Ադրբեջանի հետ: Այս մասին, թուրքական «Անատոլու» գործակալութեան փոխանցմամբ, Ստամբուլում Տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան պետութիւնների եւ կառավարութիւնների ղեկավարների 11-րդ զագաթնաժողովի շրջանակում կազմակերպուած ասուլիսի ժամանակ յայտարարել է Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը:



Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը

Իրանի նախագահն անդրադարձել է այնպիսի հարցերի, ինչպիսիք են, օրինակ՝ Թուրքիայի տարածքում ամերիկեան հակահրթիռային պաշտպանութեան տարրերի տեղակայումը, WikiLeaks-ի կողմից հրատարակուած գաղտնի փաստաթղթերը, Իրանի նախկին արտգործնախարար Մանուէհէր Մոթաքիի պաշտօնանկութիւնը, դարաբաղեան հիմնախնդիրը, հայ-իրանական, թուրք-իրանական, իրանա-ադրբեջանական յարաբերութիւնները:

Պատասխանելով դարաբաղեան հիմնախնդրի առնչութեամբ հարցին՝ Իրանի նախագահը յայտարարել է, որ իրենք պատրաստ են այդ

կամք դրսևերեն եւ որոշակի քայլեր ձեռնարկեն Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար», - յաւելել է Ասլանովը:

Նա յայտարարել է, թէ այսօր «Ադրբեջանը տարածաշրջանի ամենակայուն եւ տնտեսապէս զարգացած երկիրն է, նոյնը կարելի է ասել նաեւ երկրի ռազմական ուժի մասին»: Նրա խօսքերով՝ Հայաստանը պէտք է յիշի, որ իրենք երբեք չենք հաշտուի «իրենց հողերի գրաւման» հետ, եւ Ադրբեջանը պատրաստ է դիմել նաեւ այլ միջոցների՝ «հայերի կողմից գրաւուած տարածքներն ազատագրելու» համար:

## ԲԱՔՐՈՒՄ ՆՈՐԻՑ ՍԿՍԵԼ ԵՆ ԽՕՍԵԼ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծութեան եւ տեղեկատուութեան ապահովման բաժնի պետ էլնուր Ասլանովը մեկնաբանել է Ղարաբաղի հարցի լուծման համար տարրուող բանակցութիւններում Ադրբեջանի դիրքորոշումը:

Լրագրողների հետ զրոյցի ընթացքում Ասլանովը յայտարարել է, թէ Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան ընդունման վերաբերեալ միջազգային կազմակերպութիւնների յայտարարութիւններն արդէն բաւարար չեն:

«Միջազգային կազմակերպութիւնները պէտք է քաղաքական

կամք դրսևերեն եւ որոշակի քայլեր ձեռնարկեն Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար», - յաւելել է Ասլանովը:

Նա յայտարարել է, թէ այսօր «Ադրբեջանը տարածաշրջանի ամենակայուն եւ տնտեսապէս զարգացած երկիրն է, նոյնը կարելի է ասել նաեւ երկրի ռազմական ուժի մասին»: Նրա խօսքերով՝ Հայաստանը պէտք է յիշի, որ իրենք երբեք չենք հաշտուի «իրենց հողերի գրաւման» հետ, եւ Ադրբեջանը պատրաստ է դիմել նաեւ այլ միջոցների՝ «հայերի կողմից գրաւուած տարածքներն ազատագրելու» համար:

## ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՏԵԱՆ ՀԱՍՈՋՈՒԿՈՒԾ ԶԷ

Շարունակուած էջ 1-էն

Հակադարձելով Սերժ Սարգսեանին, Ստեփան Դեմիրճեան ըսաւ, թէ ընդդիմութեան մասին դատողութիւններ ընելու եւ որակումներ տալու փոխարէն, թող նախ ազատ ընտրութիւններ կազմակերպեն: «Իշխանութիւններն ալ երկու խմբի են բաժանուած՝ լեզբիտիմ եւ ոչ լեզբիտիմ: Հենց այս վերջին խմբում են Հայաստանի իշխանութիւնները», - ըսաւ Ստեփան Դեմիրճեան: Լեւոն Տէր-Պետրոսեանի դե-

կամք դրսևերեն եւ որոշակի քայլեր ձեռնարկեն Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար», - յաւելել է Ասլանովը:

Նա յայտարարել է, թէ այսօր «Ադրբեջանը տարածաշրջանի ամենակայուն եւ տնտեսապէս զարգացած երկիրն է, նոյնը կարելի է ասել նաեւ երկրի ռազմական ուժի մասին»: Նրա խօսքերով՝ Հայաստանը պէտք է յիշի, որ իրենք երբեք չենք հաշտուի «իրենց հողերի գրաւման» հետ, եւ Ադրբեջանը պատրաստ է դիմել նաեւ այլ միջոցների՝ «հայերի կողմից գրաւուած տարածքներն ազատագրելու» համար:

## ԵՐԱՍԻՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՅՈՒԳՈՒԾ

Շարունակուած էջ 1-էն

ամէն ինչ կը որոշուի բարեփոխումներու այն շափով, որ պատրաստ են իրագործել ծրագրի անդամ պետութիւնները», - ըսած է Եւրամիտութեան յանձնակատարը:

Տարի մը առաջ ծայր առած Արեւելեան գործընկերութեան ծրագիրով նախկին խորհրդային վեց

պետութիւններու՝ Հայաստանին, Ատրպէյճանին, Վրաստանին, Մոլտովային, Ուքրաինային ու Պելաւուսին առաջարկուեցաւ կարեւոր ֆինանսական աջակցութիւն, ազատ առեւտրի գոտիի ստեղծում, վիզային ռեժիմի մեղմացում, փոխարէնը պահանջելով մարդու իրաւունքներու պաշտպանութիւն, ազատ մրցակցային պայմաններու ապահովում ու կայուն զարգացում:

## TODAY'S ZAMAN.

### «ՆՈՐ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՈՒԹԻՒՆ, ԻՆՆ ԽՆԴԻՐՆԵՐ»

NEWS.am-ը աննշան կրճատումներով ներկայացնում է Բեռլինի Դեյթլիքի յոյժաւոր, որը հրատարակուել է քուրբակամ Today's Zaman թերթում:

Չնայած աշխարհը փոխուած է եւ Թուրքիան նոր քայլեր է ձեռնարկում արտաքին եւ ներքին քաղաքականութեան ոլորտներում, բայց որոշ հին ու խրոնիկ խնդիրներ մնում են չլուծուած, առաջ բերելով հակակրօնք: Նման խրոնիկ խնդիրներից են Կիպրոսի խնդիրն ու հայկական հարցը:

Թէեւ տպաւորութիւն է ստեղծում, թէ դրանք միջազգային խնդիրներ են, բայց դրանք նաեւ Թուրքիայի ներքին քաղաքական խնդիրներ են:

Այդ խնդիրների շուրջ բանավէճերն օգտագործուած են որպէս լծակ, ազգայնական ու ավտորիտար մեխանիզմները կենդանի պահելու համար եւ այդ կերպ, դրանք սկսել են կարեւոր դեր խաղալ Թուրքիայի ժողովրդավարացման գործընթացում: Այդ երկու հարցերը նաեւ օգտագործուած են միջազգային խաղացողների կողմից Թուրքիայի արտաքին քաղաքականութիւնն արգելակելու համար: Մենք նշանակութիւն չենք տալիս, թէ որքան հսկայական դեր ունեն այդ երկու հարցերը թուրքական քաղաքականութեան մէջ թէ՛ ներսում, թէ՛ դրսում:

Բացի այդ, Հայկական հարցը դարձել է կարեւոր գործօն թուրքամերիկեան յարաբերութիւններում: Այս տարօրինակ վիճակի հիմնական պատճառը Թուրքիայի սխալներն են, քանի որ այդ հարցը պէտք է լինէր Հայաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւնների օրակարգում:

Գործերի իրական դրութիւնը բաւականին տաղտկալի է, եւ

թուրքական հասարակութեան համար արդէն միեւնոյն է, որովհետեւ նա սովոր է հաղորդագրութիւններ ստանալ վաշինգթոնից Կոնգրէսում հայկական բանաձեւերի ճակատագրի մասին:

Նոյնիսկ կան մարդիկ, ովքեր բացառապէս ասում են, որ թեթեւ շունչ կը քաշեն, եթէ Կոնգրէսն ընդունի «Հայոց բանաձեւը» ոչ այն պատճառով, որ նրանք համարիտ են բովանդակութեան հետ, այլ որովհետեւ նրանք յոգնել են այդքան էներգիա ծախսել դրա վրայ:

Այդպիսի բանաձեւն ուժգնորէն կը վնասէր հայ-թուրքական յարաբերութիւններին, եւ նրանք, ովքեր ցանկանում են նոր հաւասարակշռութիւն հաստատել Հիւսիսային Կովկասում, պէտք է մտահոգուեն դրանով: Այդպիսով, եթէ թուրքամերիկեան յարաբերութիւնները փշանան, ապա ինչպէ՞ս կարելի է սպասել, որ Անկարան ԱՄՆ-ին կը դարձնի այն «ռեժիմի» խոշոր գործընկեր, որն ուզում է Թուրքիան հաստատել իրաքի, Սիրիայի եւ ուրիշների հետ: Ի՞նչ կը լինի, եթէ նա օգնութեան կանչի Ռուսաստանին:

Ներկայիս աշխարհում իւրաքանչիւր խաղացողի համար կան բազմաթիւ տարբերակներ եւ շատ դժուար է դառնում հաշուել միայն եկամուտներն ու կորուստները: Նաեւ աւելի դժուար է դարձել հին հարցերը լուծել դասական տարբերակով, որպէսզի հնարաւոր լինի ճնշում գործադրել ուրիշ խաղացողների վրայ: Իւրաքանչիւր ընտրութիւն իր գինն ունի, սակայն ճշմարիտ է նաեւ այն, որ այսօրուայ ընտրութիւնն առաւելապէս թելադրուած է ներքին հաւասարակշռութիւններով, քան արտասահմանեան ճնշումներով:

## ԶԻԼԻԱՅՑ ՀԱՄԱՅՆՔԸ ԲՈՂՈՔՈՒՄ Է ՐԱՅԱՍՏԱՆԻ ԻՒՊԱՏՈՍ Է ՆՇԱՆԱԿՈՒԵԼ ՊԻՆՈՉԵՏԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾԱԾ ԴԻՒՆԱԳԵՏԸ

Դեկտեմբերի 2-ին ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի հրամանով Չիլիում Հայաստանի պատուոյ հիւպատոս է նշանակուել Էդուարդ Ռոզրիգեզ Գոնալէսին: Այս մասին յայտնուած է Ուրուգուայի հայկական «Արաքս» ռադիոն: Ինչպէս նշուած է Արգենտինայում Հայաստանի դեսպանատան տարածած հաղորդագրութեան մէջ, Ռոզրիգեզը փաստաբան է, արտաքին առեւտրի մասնագէտ եւ բազմաթիւ հրատակութիւնների հեղինակ: Ժամանակին եղել է Չիլիի դեսպանը ծապոնիայում եւ Արգենտինայում եւ ստացել տարբեր շքանշաններ: Սակայն այս նշանակումը միանշանակ չի ընդունուել Չիլիում ապրող մեր հայրենակիցների կողմից: Ոմանք, ինչպէս նշուած է «Արաքս»-ը, արդէն բողոքի ձայն են բարձրացնում:

Չիլիահայ համայնքի արտաքին տնտեսական յարաբերութիւն-

ների նախկին պատասխանատու, տնտեսագէտ Արմէն Կոյունջեանը «Արաքս» հետ զրոյցի ժամանակ ասել է, թէ նոր հիւպատոսի միակ կապը համայնքի հետ այն է, որ գործարար Էդուարդ Ռոզրիգեզին ներկայացուցիչն է Չիլիում:

Նաեւ յայտնի է դարձել, որ նոր հիւպատոսը դեռ չի հանդիպել կամ կապ հաստատել համայնքի հետ, ինչը նաեւ լաւ տպաւորութիւն չի թողել չիլիահայերի մօտ: Կոյունջեանը նաեւ տեղեկացրել է, որ նորանշանակ պատուոյ հիւպատոսն ունի աջակողմեան դիրքորոշում, Պինոչեթի գինուորակ կանաչապտուկութեան օրօք դիւանագիտական պաշտօնները է զբաղեցրել, եւ ազատուել է աշխատանքից, ինչն էլ հնարաւորութիւն է սուրբ իբրեւ դեսպան աշխատել ժողովրդավարական վարչակազմերի օրօք:

HayNews.am

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

# HABERTURK. «ԿՐ ԳԱՅ ՕՐԸ, ԵՒ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԷԼ ԿՐ ՔՆՆԱՐԿՈՒԻ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ»

Թուրքական Haberturk-ի սիւնակագիր, վերլուծաբան Ամբերին Զամանը իր «Հայկական բանաձեւը» հրատարակման մէջ անդրադարձել է օրեր առաջ ԱՄՆ-ում հայկական բանաձեւի հետ կապուած թուրք-ամերիկեան զարգացումներին:

«ԱՄՆ-ում հայերը փորձեցին վերջին պահին կոնգրէսի ներկայացուցիչներին պաշտօն օրակարգ մտցնել մի նախագիծ, որը ցեղասպանութիւն է որակում 1915-ին հայերի նախնիների նկատմամբ իրականացրած կոտորածը: Սակայն ԱՄՆ-ի համար շատ աւելի կարեւոր խնդիրներ կային, եւ հայկական նախագիծն հերթ չհասաւ: Այդ արդիւնքը եղաւ նաեւ Օբամայի վարչակարգի շնորհիւ: Ինչպէս նախորդ տարիներին, թուրքիան գործի դրեց բոլոր միջոցները: Օբամային նամակ գրեց շրջողանը, իսկ ԱԳ նախարար Դավութօղլուն աւելի կոնկրետ հասկացրեց Քլինթոնին՝ հայկական նախագիծն անցնելու պարագայում թուրքիայի քայլերի մասին: Այսպիսով, ցեղասպանութեան ճանաչման մի ճգնաժամ էլ յաղթահարեցինք:

Սակայն բոլորը գիտեն, որ սա ոչ առաջինն է, ոչ էլ վերջինն է լինելու: ԱՄՆ-ի հայերը այդ արշաւներից երբեք չեն հրաժարուելու: Ընդհակառակը՝ 1915-ի ողբերգութեան 100-ամեակի մօտենալուն պէս, ցեղասպանութեան ճանաչման ջանքերը աւելի են շատանալու:

Լաւ, թուրքիան ինչ պէտք է անի եւ ինչ կարող է անել: Մի պահ մեր ձեռքերը դնենք մեր խղճին եւ հարցնենք, թէ 1915-ին

ի՞նչ եղան հազարաւոր տարիներ այս հողերի վրայ ապրող միլիոնաւոր հայերը: Նախկինում տաբու էր այս թեման մինչ մեր սիրելի Հրանդ Դինքի սպանութիւնը, որից յետոյ սկսեցին ազատ քննարկել: Շատ քիչ տեղեկութիւններ կայ, թէ 1915-ից առաջ մօտ 1,3 միլիոն օսմանցի հայերի գլխին ինչէ՞ր են եկել: Ռուսների կողքին կանգնած մի խումբ հայերի դաւաճանութիւնը առիթ դարձաւ, որ երիտթուրքերը դրա համար պատժեն ամբողջ հայ ժողովրդին: Կոտորում էին թէ երեխաներին, թէ կանանց, թէ ծերերին, կամ բռնի տեղահանում էին: Տեղահանուածներն էլ ճանապարհին մահանում էին սովածութիւնից, հիւանդութիւններից կամ աւազակախմբերի յարձակումներից: Սիրիայի Դեր Զորի անապատներում հազարաւոր հայեր են մահացել: Որոշները դարձել են մահմեդական, որոշներն էլ բարեհոգի թուրքերի եւ քրդերի կողմից փրկուել:

Արտասահման փախածների թոռներն էլ այժմ իրաւացիօրէն պահանջում են, որ վերջ դրուի ժխտողականութեանը եւ սպասում են ներողութեան: Սկսել են աւելանալ դատարանով փոխհատուցում պահանջողների թիւը: Չեմ կարծում, որ սրա դէմը կ'առնուէր, եթէ նոյնիսկ Հայաստանի հետ սահմանի բացում եւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատում նախատեսող արձանագրութիւնները վաւերացուէին: Պարզապէս, Ցեղասպանութեան նախագիծ ընդունումը մի որոշ ժամանակ աւելի կը

Շաբ.բ էջ 19

# «ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՏ ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՈՍԻ ԼՈՅՍՈՎ ՊԻՏԻ ՓՆՏՈՒՆՔ», - ԱՍԵԼ Է ԹՈՒՐԹ ՄԵԿՆԱԲԱՆԸ

Թուրքական CNNturk-ի գլխաւոր խմբագիր, յայտնի վերլուծաբան Մեհմէտ Ալի Բիրանտը իր հրատարակումներից մէկում անդրադարձել է թուրք-ամերիկեան վերջին զարգացումներին:

«Հայաստանի հետ ստորագրուած արձանագրութիւնները մոմի լոյսով ենք փնտռելու» ենթավերնագրի տակ Մեհմէտ Ալի Բիրանտն անդրադարձել է ԱՄՆ կոնգրէսում հայկական բանաձեւերից ազատուելու խնդրին՝ նշելով, թէ դրա միակ ուղին Հայաստանի հետ ստորագրուած արձանագրութիւնների վաւերացումն է: «Մի կերպ չաջողուեց խոյս տալ հայկական բանաձեւի հարցում գոյ ուտելուց: Օբամայի վարչակարգի ճնշումների, հրէական լոբբիի սպասուած աջակցութեան եւ բաւարար քուէների բացակայութեան շնորհիւ գնդակը խաղից դուրս յայտնուեց: Բոլորը հանգիստ չունչ քաշեցին», - նշել է Բիրանտը:

Թուրք վերլուծաբանը շեշտել է, թէ յաջորդ տարի հայկական նոր նախագիծ կը յայտնուի կոնգրէսում:

## ՕՐՅԱՆ ՓԱՍՈՒՔ .- «ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱՍԻՆ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ ԽԱՄՐԵԼ ԵՆ»

2006 թուականի Նոբելեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքը գրել է, թէ 50-60-ական թուականներին՝ իր մանկութեան տարիների դասագրքերում, Եւրոպան ներկայացուել է ռոմանտիկ լուսաստակով:

Օսմանեան կայսրութեան փլուտակների վրայ կառուցելով նոր հանրապետութիւնը, Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը հասարակական-մշակութային արեւմտամէտ բարեփոխումներ է նախաձեռնել: Դրանց օրինականացման համար հարկ էր ձեւաւորել թրքական նոր վերնախաւ, դպրոցականներին պէտք էր բացատրել, թէ ինչու է անհրաժեշտ պետութիւնը տարանջատել կրօնից, ինչու է պէտք արաբական գրերը փոխարինել լատինական այբուբենով:

Փամուքի փոխանցմամբ, կողմնորոշումը դէպի Եւրոպա թուրքերի կողմից ընկալուել է որպէս պատմական անհրաժեշտութիւն, նոր իրողութիւններին յարմարուելու գործնական պահանջ: Բայց ինչո՞ւ է հիմա խամրել Եւրոպայի այդքան փայտաշատ կերպարը:

Փամուքի կարծիքով, թուրքիան դարձել է նիւթապէս աւելի ապահով: Զինուորական վարչակարգների օրօք երկիրը հողագործական երկրից վերածուել է դինամիկ զարգացող հանրապետութիւն, որտեղ կայ նաեւ զարգացած քաղաքացիական հասարակարգ:

Բացի այդ, Եւրամիութեանն անդամակցելու բանակցային գործընթացը դանդաղել, գրեթէ կանգ է առել: Փամուքի համոզմամբ, այդ բանակցութիւններին ակախուօրէն խոչընդոտում է թրքական բանակի որոշակի շրջանակների, ազգայնական կուսակցութիւնների եւ որոշ լրատուամիջոցների դաշինքը:

«Հենց դա էլ հրահրել է իմ հանդէպ հետապնդումները, այլոց վրայ ուղղուած կրակոցները, միսի-

սում: «Եթէ յաջորդ տարուանն էլ չանցնի, միւս տարի նորը կը յայտնուի եւ այսպէս շարունակ մինչ 2015-ը (Ցեղասպանութեան 100-ամեակը) այդ ճնշումը շարունակուելու է: Այդ գործընթացի կասեցման միակ միջոցը, Երեւանի հետ ստորագրուած արձանագրութիւններն են: Դրանով մեր վրայ ճնշումը կը վերացուի», - գրել է Մեհմէտ Ալի Բիրանտը:

«Եթէ մենք մեզ չխաբենք ու անկեղծ լինենք, ապա պէտք է ընդունենք, որ Անկարան չկարողացաւ կեանքի կոչել արձանագրութիւնները: Թուրքիայի ԱԳՆ-ն աղբբջանցիներին չի կարողացել լաւ բացատրել, կամ էլ աղբբջանցի մեր եղբայրները դա լուրջ չեն ընդունել: Թուրքիան չկարողացաւ կոտրել Ալիեւին եւ խոնարհուեց Բաքուի առաջ: Այժմ Անկարան հազար անգամ փոշմանել է: Մինչեւ չկարողանանք արձանագրութիւնները վերակենդանացնել, հայկական բանաձեւերից անհնար է ազատուել», - ընդգծել է CNNturk-ի գլխաւոր խմբագիրը:

ոններն են քրիստոնեայ հոգեւորականների սպանութիւնները», - գրել է Օրհան Փամուքը:


Նրա կարծիքով, կայ նաեւ զգացական հանգամանք. 20-րդ դարում թրքական վերնախաւի համար օրինակելի երկիրը Ֆրանսան էր. «Թուրքերը մեծագոյն հիասթափութիւն են ապրել, երբ անցած 5 տարիների ընթացքում համոզուել են, որ հենց Ֆրանսան է Եւրամիութեանը թուրքիայի անդամակցութեան ամենահիմնական ընդդիմախօսը: Իսկ ամենամեծ վրդովմունքը յարուցել է այն, որ Եւրոպան ձորձ Պուշի դրդմամբ ներքաշուել է իրաքեան պատերազմի մէջ»:

Օրհան Փամուքի կարծիքով, Եւրոպական միութիւնը, լաւ չի հասկանում» իր ներքին խնդիրները:

«Ակնյայտ է, որ այլ դաւանանքի, ռասայի, մշակութի ներկայացուցիչների հետ գոյակցելու հարցում Եւրոպայի ժողովուրդների փորձը ամերիկացիների համեմատութեան վրայ աւելի փոքր է: Այդ գոյակցութիւնը եւրոպացիներին չի ոգեւորում: Այդ դիրքորոշումը միայն աւելի է խորացնում խնդիրը: Չի կարելի առյաւէտ Եւրոպա չթողնել ներգաղթելու նպատակ ունեցող Ասիայի եւ Աֆրիկայի աղքատներին եւ գործազուրկներին», - գրել է Օրհան Փամուքը:

«Գարդիան»-ում հրատարակած յօդուածը թուրք անուանի գրողն աւարտել հետտորական այսպիսի հարցադրմամբ. «Ամենասարսափելին այն է, որ իմիզդանները դէմ ուղղուած քաղաքականութիւնը եւ նախապաշարմունքը քայքայում են հենց Եւրոպայի արժէքները: Արդեօք չի՞ եկել պահը, որ Եւրոպան չի իր արմատական արժէքները մասին, որոնք ժամանակին Եւրոպան դարձրել են ամբողջ աշխարհի ինտելեկտուալներին ձգող կենտրոն»:

## ԶԱՅ ԵՒ ԹՈՒՐԹ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳԻՐՔ՝ «ԽՕՍԵԼՈՎ ՄԻՍԵԱՆՑ ԶԵՏ»



«Խօսելով միմեանց հետ: Անձնական չիճողութիւններ անցնալի մասին Հայաստանում եւ թուրքիայում» ապսիսի վերնագրով հայ եւ թուրք հեղինակների գիրք է հրատարակուել, որը տպագրուել է երեք լեզուներով՝ հայերէն, թուրքերէն եւ անգլերէն:

Գրքի առաջին մասը՝ «Ափսոս, որ նրանք չմնացին» ենթավերնագրով, գրել է Ստամպուլի Սաբանչի համալսարանի պրոֆեսոր Լեյլա Նեյզին: Երկրորդ մասը՝ «Ո՞ւմ ենք: Ի՞նչ ենք» ենթավերնագրով, գրել է Հայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի Ազգագրութեան ինստիտուտի պրոֆեսոր Հրանուշ Խատեան-Առաքելեանը:

Այս մասում 1915-ի ցեղասպանութիւնից փրկուած մի կնոջ պատմութիւն է, որ փոխանցել է նրա ազգականը. - «Տատիկիս ամբողջ կեանքի ընթացքում ոչինչ էր ուրախացնում: Նա մահացաւ երեք մեջ՝ միշտ կրկնելով, որ դա հատուցում է իր գործած մեղքի համար: Նա գաղթի ճանապարհին էր թողել իր փոքրիկ աղջկան: Դա շատ տխուր պատմութիւն է: Ճանապարհին նրանք ոչ մի ուտելիք չեն կարողացել գտնել: Նրանք չորս երեխայ են ունեցել: Փոքրիկ աղջիկն ամբողջ ժամանակ լաց է եղել: Թուրք զինուորը անընդհատ խփել է նրան ու կարգադրել, որ արագ քայլի, հետ չընկնի: Պապասել է՝ «արի թողնենք աղջկան այստեղ, ճանապարհին, իսկ մենք գնանք, մենք կարող ենք փրկել միայն մեր երեք տղաներին»:

Այս պատմութիւնը ներկայացնողը որոշ դադարից, մտքերը հաւաքելուց յետոյ ասել է. - «Տատիկիս ամբողջ կեանքի ընթացքում ոչինչ էր ուրախացնում: Նա մահացաւ երեք մեջ՝ միշտ կրկնելով, որ դա հատուցում է իր գործած մեղքի համար: Նա գաղթի ճանապարհին էր թողել իր փոքրիկ աղջկան: Դա շատ տխուր պատմութիւն է: Ճանապարհին նրանք ոչ մի ուտելիք չեն կարողացել գտնել: Նրանք չորս երեխայ են ունեցել: Փոքրիկ աղջիկն ամբողջ ժամանակ լաց է եղել: Թուրք զինուորը անընդհատ խփել է նրան ու կարգադրել, որ արագ քայլի, հետ չընկնի: Պապասել է՝ «արի թողնենք աղջկան այստեղ, ճանապարհին, իսկ մենք գնանք, մենք կարող ենք փրկել միայն մեր երեք տղաներին»:

Այս պատմութիւնը ներկայացնողը որոշ դադարից, մտքերը հաւաքելուց յետոյ ասել է. - «Տատիկիս ամբողջ կեանքի ընթացքում ոչինչ էր ուրախացնում: Նա մահացաւ երեք մեջ՝ միշտ կրկնելով, որ դա հատուցում է իր գործած մեղքի համար: Նա գաղթի ճանապարհին էր թողել իր փոքրիկ աղջկան: Դա շատ տխուր պատմութիւն է: Ճանապարհին նրանք ոչ մի ուտելիք չեն կարողացել գտնել: Նրանք չորս երեխայ են ունեցել: Փոքրիկ աղջիկն ամբողջ ժամանակ լաց է եղել: Թուրք զինուորը անընդհատ խփել է նրան ու կարգադրել, որ արագ քայլի, հետ չընկնի: Պապասել է՝ «արի թողնենք աղջկան այստեղ, ճանապարհին, իսկ մենք գնանք, մենք կարող ենք փրկել միայն մեր երեք տղաներին»:

Շաբ.բ էջ 19

**ՄԱՍԻՍ**  
ԱՍԵՆԱՎԱՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

### ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱՏԵԱՆ. «2010-Ը ԿՈՐՑՐԱԾ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱՐԻ Է»

Ինչպե՞ս կը գնահատե՞ք 2010-ը: Իմ կարծիքով՝ 2010 թ. տնտեսական յաջողությունների օրինակներ մեզ ցույց չի տալիս: Հիմնական խնդիրները, որ առկայ էին տարեկանը, տարեվերջին պարզապես սրուեցին: Թիւ մէկ խնդիրը՝ պէտք էր փոքր-ինչ աշխատել ցրել կապիտալը, որ չափազանց կենսորոնացուած է:



Ունենք տարուայ 10 ամսուայ տուեալները, տեսնում ենք, որ խոշորի դերը հարկերի մէջ պակասել է, մինչդեռ վարչապետը եւ կառավարութեան անդամները ճիշտ հակառակն էին ասում:

Երկրորդ՝ պիւտճէում նախատեսուած 4 պլուս-մինուս 1,5% սղաճը կ'աւարտուի մօտաւորապէս 8,5-9 տոկոսով, այսինքն՝ աւելի քան երկու անգամ: Սա, բնականաբար, որեւէ կերպ յաջողութիւն համարել չի կարելի:

Երրորդ՝ զազի եւ էներգակիրների գնի բարձրացումը անմրցունակ է դարձրել հանրապետութեան տնտեսութիւնն ընդհանրապէս:

Եթէ փոքր-ինչ արտահանում էլ կայ, ապա միայն հանքահումքային արդիւնաբերութեան արտադրանքը, որովհետեւ պետութիւնը ունետա չի վերցնում, եւ ահա այդ ունետայի շնորհիւ մարդիկ կարողանում են փոքր-ինչ արտահանել, դա էլ էր դէպքում, երբ 2010 թ. պղնձի եւ մոլիբդենի գներն անսահմանաբար բարձրացան:

Չորրորդ՝ եթէ մենք նայում ենք պիւտճէի եկամուտները, ապա չյաջողուեց վերականգնել 2007 թ. ռեալ մակարդակը՝ սղաճը բացառած:

Այո, մօտաւորապէս 15-20%-ով պիւտճէի եկամուտներն աւել կը ստացուեն, բայց պէտք է նկատել նաեւ, որ ինֆլիացիան է բարձր, պէտք է նկատի ունենալ, որ տարուայ ընթացքում հարկման շէմն է բարձրացել, որովհետեւ ահագին բացառութիւններ հանուեցին:

Երբ մաթեմատիկորէն չեզոքացնում եմ սրանց ազդեցութիւնը, ապա տեսնում եմ, որ հաւաքում է աւելի քիչ պիւտճէ, քան 2007-ին:

Հինգերորդ՝ պետութիւնը չկարողացաւ, չի ընկալում, չի հասկանում, այդ թւում՝ թէ կառավարութիւնը, թէ կենտրոնական բանկը՝ ինչպէս վարուել դրամի փոխարժէքի հետ: Այն արհեստականօրէն բարձրանում է:

Ամբողջ աշխարհը 2010 թ. համարում է արտարժոյթների պատերազմ, քանի որ մտնելով Առեւտրի համաշխարհային կազմակերպութեան մէջ՝ մարդիկ այլեւս մաքսատուքերի միջոցով չեն կարող

ըողանում կարգաւորել արտաքին առեւտուրը եւ որպէս փոխարինող գործիք փորձում են օգտագործել արժոյթների պատերազմը:

Յաջողել են այն երկրները, որոնք էժանացրել են իրենց արտարժոյթը, մենք ճիշտ հակառակն ենք արել: Որեւէ տրամաբանութիւն եւ որեւէ հիմք չկայ այս ամէնը յաջողութիւն անուանելու համար:

Նայէք ՀՆԱ-ի աճի թիւը, գուցէ դա կազմի 2%: 10 անգամ ասել եմ, որ ՀՆԱ-ն ժամանակակից պայմաններում ոչինչ չի բնութագրում, բացի դրանից՝ կարելի է այդ թիւը մեծացնել՝ աւելացնելով ՀՆԱ-ի էներգատարութիւնը կամ կապիտալը:

Այդ արտաւոր ցուցանիշը Հայաստանում լաւագոյն դէպքում կը լինի 2%, ամբողջ աշխարհում՝ 4,8%: 2009 թ. Հայաստանում եղել է -14,4%, աշխարհում՝ -2%: Այսինքն՝ Հայաստանը եւ աշխարհի զարգացման միջին տեմպերը հեռանում են:

Սրանից 15 տարի առաջ՝ 95-96 թթ., շատ վատ էր, բոլորը դժգոհ էին, Հայաստանը 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի արտադրութեամբ աշխարհում գրաւում էր 75-90-րդ տեղերը:

Այսօր մենք նոյնիսկ այդ տեղերը գիջեցինք, իսկ այդ ժամանակ շատ էինք քննադատուած, թէ էդ ուր ենք հասել, Հայաստանը մօտեցրել ենք Ափրիկային:

Այսօր մենք ունենք 2009 թ. 118-րդ տեղը, իսկ հիմա՝ 125-րդ տեղը, մեզնից հետ են Ափրիկէի 58 պետութիւններից մոտ 45-ը եւ մի քանի երկրներ Ասիայում՝ Բանգլադէշը, Նեպալը, Աֆղանստանը, Հարաւային Ամերիկայում մէկ-երկու պետութիւն:

Խայտառակ իրավիճակ է, մենք արդէն չենք ամաչում՝ ասելով, որ տեսէք՝ գոնէ դեռ Մոզամբիկի հետ

կարող ենք մրցակցել: Սա վերաբերում է բոլոր ցուցանիշներին: Ես ցաւում եմ:

Այս տարին, ինչպէս 2009-ը եւ 2008-ը, պէտք է արձանագրել որպէս կորցրած հնարաւորութիւնների տարի, հերթական յետընթաց քայլ կատարած տարի:

Ի՞նչ պէտք է անել կառավարութիւնը, որ չի արել:

Կառավարութիւնը յստակ քայլեր պէտք է ձեռնարկեր: Օրինակ՝ պէտք է մտցներ պրոգրեսիւ եկամտահարկ, չի արել: Կառավարութիւնը ըստ ոլորտների պէտք է բիզնեսը բաժաներ՝ ասելով՝ թոյլ չեմ տալիս 100 մլն տոլարից աւելի շրջանառութիւն մէկի մօտ, հակառակ դէպքում 25% շահութահարկը դարձնում եմ 75% կամ 95%:

Պէտք է պաշարներ խոշորի դէմ, չթողնել փոքրիկ դաշտը փոքրանայ մի քանի հոգու վրայ: Էս 10-15 օլիգարխն են խանգարում էս երկրում, էս երկիրը պարտաւոր է պատմութիւն ունենալ, նրանք պատմութիւն չեն ստեղծի: Կառավարութիւնը պարտաւոր էր յայտարարել հանքերի գինը եւ վաճառել, հո հանքն էլ չէ՞ս սեփականաշնորհել:

... 2000 թ. նկարահանող մի փոքրիկ խմբի ուղեկցութեամբ Իսահակեանի թոռ Աւիկ Իսահակեանն անցաւ Վարպետի արցախեան ճամբաներով, եղաւ Ստեփանակերտում, այն հիւրանոցում, որտեղ Իսահակեանը տիկնոջ՝ Սոֆյայի հետ իջեւանել էր:

Մարտունու շրջանի Բերդաշէն գիւղը, որն այնքան հիւրընկալօրէն ընդունել էր մեծ բանաստեղծին, սպաւորուած էր Աւիկ Իսահակեանի այցով: Գիւղացիներից շատերը յիշում եւ Չերմ յուշեր էին պատմում, հպարտանում, որ անձամբ զրուցել եւ նոյնիսկ լուսանկարուել են մեծ գրողի հետ: Այցելութեան արդիւնքում ծնուեցին 40 րոպէանոց «Արցախ. Իսահակեանի հետքերով» ֆիլմն ու «Արցախը եւ Վարպետը» գիրքը:

Այս սողերը գրելու առիթ հանդիսացան հենց «Արցախը եւ Վարպետը» ժողովածուն եւ գրքի շապիկին գետեղուած նկարը, որտեղ

Իսահակեանի հետ հպարտօրէն անմահացել են մի խումբ բերդաշէնցիներ, նրանց թուում է նաեւ մեծ մօրաքոյրս՝ Վարսենիկ Սողոմոնեանը: Նա այսօր արդէն 88 տարեկան է եւ հպարտութեամբ է յիշում Վարպետի հետ հանդիպելու անմոռանալի օրը. «Լուր տարածուեց գիւղում, թէ մեծ, շատ մեծ մարդ է գալիս Բերդաշէն, պէտք է կոտնտեսութեան գրասենեակը, գլխաւոր փողոցները մաքուր պահել, որքան հնարաւոր է պատշաճ ձեւով դիմաւորել ամբողջ Եւրոպան, գրեթէ աշխարհը ոտի տակ տուած այդ մարդուն: Եւ մի քանի օր յետոյ պարզուեց, որ այդ մարդը բոլորիս սիրելի բանաստեղծ Աւետիք Իսահակեանն է: Մեր ուրախութեանը չափ չկար, մանաւանդ, նրա ոտանաւորներին մէկն էլ, որ մի շուշեցի երգի էր վերածել, երգում էինք: Եւ ահա Վարպետը Բերդաշէնում է: Յուպը ձեռքին, գեղեցիկ ու իմաստուն աչքերով մի մարդ էր, հայեացքից բարութիւն էր թափուած, մեզ հետ այնպէս էր խօսում, ասես հարիւր տարուայ ծանօթներ լինէինք: Երբ մեզ հարցրին, թէ ինչ գիտենք Վարպետի գրուածքներից, ես իսկոյն առաջ եկայ, արտասանեցի գրողի «Մեծ յաղթանակի երգը» բանաստեղծութիւնը: 1948 թիւն էր, պատերազմի կսկիծը դեռ թարմ էր: Արտասանութիւնս դուր եկաւ Իսահակեանին: Ջաքարն առաջարկեց պոետի հետ նկարուել, խմբուեցինք նրա շուրջ: Ես կանգնեցի Վարպետի մօտ, եւ անմահացանք:

Ափսոս մեր գիւղում երկար չմնաց Իսահակեանը»:

Գիրքը կազմել եւ յառաջաբանը գրել է բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Իսահակեանի թոռ Աւիկ Իսահակեանը: Յառաջաբանում նա խօսում է գրքի տպագրման շարժառիթի եւ անհրաժեշտութեան մասին, պարզաբանում Իսահակեանի՝ Արցախ գալու (1908-ին լրացել է Վարպետի Արցախ այցելելու 60-ամեակը) կարեւորութիւնը: Դեռեւս 1988 թուականի աշնանը Աւիկ Իսահակեանը Երեւանում հրատարակել է Իսահակեանի օրագրային այն գրառումները, որոնք արուել էին հենց Արցախում: Սեղմ տողերում երեւում է «ստալինեան ռեժիմի» տակ ճշշող արցախցու նկարագիրը: «Արցախը եւ Վարպետը» գիրքն առաւել արժէքաւոր է դառնում նաեւ նրանով, որ այստեղ գետեղուել են մեծ գրողի Արցախում կատարած գրառումները ձեռագիր օրինակները:

«Շուշուայ կոտորածը 1920 թուին 22 Մարտի» խորագրի տակ Իսահակեանի գրառմամբ տրուած է Միրզա Տէր-Սարգսեանի (Միրսար) յիշատակարանից մի հատուած, ուր նկարագրուած է 1920 թ. Շուշիի կոտորածը, որի ժամանակ 6000 հայ է սպանուել, աւերուել են 40-ից աւելի հայկական գիւղեր:

Օրագրի իւրաքանչիւր սող ընթերցում է յուզմունքով, զգում ես մեծ հայրենասէրի տառապանքը. «Մարդկութեան, մեծ ազգերի, լուսաւոր ազգերի աչքերի առաջ մի ողջ ժողովուրդ հայրենազրկուած է, հրեայ է դառնում, բայց ոչ ոք ձեռք չբարձրացրեց կասեցնելու բարբարոսի հարուածները, դաժան գործը, միմիայն մղուած էր փոխտական, գազանային բնազդներից, հաշիւներից»:

Վարպետին խորապէս վշտացրել է այն, որ Ստեփանակերտում

հայերէն ոչ մի գիրք չի տպագրուած, հրատարակուած է ընդամէնը մի «ողորմելի թերթ», եւ «Լեռնային Ղարաբաղի աւտոնոմիան բացարձակ սուտ բան է»:

Գրքում Իսահակեանի ձեռագրերի արտատպութեանը յաջողում է անուանի բանաստեղծ ու մեծ հայրենասէր Բոգդան Ջանեանի «Վարպետն Արցախում» յուշը:

Ջանեանն ամենուրէք ուղեկցել է Վարպետին, տեսել այն Չերմութիւնն ու սէրը, որով արցախցին դիմաւորել է Իսահակեանին: Վարպետի Ղարաբաղ գալու լուրը տնից տուն մտաւ, ամբողջ Ստեփանակերտը ոտքի վրայ էր, քաղաքն ուզում էր մօտիկից տեսնել սիրելի պոետին, որ սրբի տեսք ունէր եւ իր ներկայութեամբ պիտի սրբացնէր ամէնքին եւ ամէն ինչ:

Հրաչեայ Բեգլարեանը գրի է առել արդէն 80-ն անց Տիգրան Գրիգորեանի՝ Իսահակեանի մասին պատմած յուշերը, որոնք աւելի շատ փաստանքի երանգներ ունեն, քան հպարտութեան: Կուսակցական գործիչը խղճի խայթով է խոստովանում, որ, լինելով մարզկոմի առաջին քարտուղար, չկարողացաւ արժանավայել ընդունել մեծ բանաստեղծին եւ մեծ հային (ժամանակներն այդպիսին էին)...

Բաւականին խոր ընդհանրացումներ ունի Սերգէյ Սարինեանի «Աւետիք Իսահակեանի պոեմը» գիտական յօդուածը՝ Աւիկ Իսահակեանի «Աւետիք Իսահակեանի պոեմները» մենագրութեան մասին:

Գիրքը, փաստօրէն, բանաստեղծի պոեմների առաջին ամբողջական ուսումնասիրութիւնն է - Ս. Սարինեանի բնորոշմամբ, «առաւել նպատակային է հնչում հետազօտութեան գիտական դրուածքի փաստագրական եւ արխիւային նիւթերի վրայ»:

Արդի հայ գրականագիտական մտքի օրէնսդիր ակադեմիկոսը խօսում է նաեւ «Ուստա Կարօ» վէպի մասին՝ այն համարելով ազգային էպոս: «Ուստա Կարօ» յայտնի է իր մի շարք տարբերակներով եւ անաւարտութեամբ: Սարինեանը նախընտրում է առաջին տարբերակը, որ կատարեալ եւ յաջողուած է թէ՛ ըստ ձեւի, թէ՛ սիւժէի փիլիսոփայական աւարտուածութեամբ: Նա արժէքաւոր դիտարկումներ ունի նաեւ վէպի գեղարուեստական առանձնատեսութիւնների մասին: Իսահակեանն ինքը վէպի առաջին տարբերակի շապիկի վրայ գետեղել է Ալֆոնս Դոդէի «Ֆրանսիայում ամէն ոք ինչ-որ չափով Տարտարէն է» ասոյթը՝ շարունակելով «Ամէն մի հայ փոքր-ինչ Ուստա Կարօ է»: Սարինեանը նշուածների շարքում աւելացնում է Շառլ դը Կոստերի «Ուլենշպիգելի եւ Լամմէ Գուդակի արկածները» եւ Գոգոլի «Մեռած հոգիներ» վերնագրերի անունները: Սարինյանը Ուստա Կարոյին համարում է հաւաքական կերպար, մեծ երեւակայութեամբ օժտուած անհատականութիւն. «Տեղ կայ, որ մի սուտ՝ հազար դորթ արժէ, էնպէս լաւ, սիրուն ստեր կան, որ ես ողջ աշխարհքի հետ չեմ փոխի»:

Սարինեանն իրաւացիօրէն նկատել է, որ Իսահակեանի վէպի հիմնական գաղափարը «Հայկական հարցն» է, որի լուսաբանումը կարծես թէ ամբողջութեամբ չչաջողուեց, այդ պատճառով էլ Իսահակեանը վերամշակում է այն՝ կատարելով ոճական ու կառուցուածքային հակափոփոխութիւններ, «ընդ-

լայնելով վէպի տարածաժամանակային յարաբերակցութիւնը»:

Բայց, ցաւօք, այդպէս էլ անաւարտ մնաց «Ուստա Կարօն», սակայն դա չխանգարեց, որ այն դառնայ «գեղարուեստական մի անկրկնելի փորձ՝ ստեղծելու 19-20-րդ դդ. հայոց կեանքի էպոսը»:

«Ոսկեփոփոք ծիրանին ուսին» առինքնող խորագիրն է կրում Արցախի գրողների միութեան նախագահ Վարդան Յակոբեանի յօդուածը: Իսկական պոեզիան Վարդան Յակոբեանը համարում է հեռատեսութիւնը:

Իսահակեանի պոեզիան բնորոշելու համար բաւականին տեղին է այս որակումը: Իսահակեանի ձայնն իրօք լուսեղէն ու մարգարէական է: Բանաստեղծական մէջբերումներով Յակոբեանը ներկայացնում է Իսահակեանն մտածողի եւ գեղագէտի կերպարը, ցոյց տալիս նրա անսպառ հայրենասիրութիւնն ու իմաստասիրութիւնը. «Իսահակեանը խոշոր եւ անընդգրկելի երեւոյթ է: Եւ նրան վերլուծել, մեկնել հնարաւոր չէ ամէնեւին: Պարզապէս պէտք է կարդալ նրան: Ոչ թէ կարդալ, այլ ապրել խորը, անհունօրէն»:

Իսահակեանը եզակի էր նաեւ նրանով, որ խիզախեց շատ տարիներ առաջ՝ հայ գրողի համար «խստօրէն արգելուած» ժամանակներում, լինել Արցախում, որ նրա բնորոշմամբ «քաջերի օրրանն է». «Արցախ-Սիւնեաց աշխարհը՝ քաջերի այդ օրրանը, որ միշտ բարձրագուլիս է եղել համատարած ստրկութեան մէջ. այդ անմատոյց լեռներն ու դժուար կապանները, ուր թափառում է Դաւիթ-Քէլի ողին»:

...Յուսանք, որ նոր սերունդը կը մեծանայ ռազմական, մարտիկ, տղամարդ, հպարտ, յանդուգն, անվախ եւ զլուխը բարձր: Թշնամին միայն զարկողից կը վախենայ ու կը պատկառի:

Մենք պարծենում ենք միայն մեր կուլտուրական յատկութիւններով, արհեստներով, շինարարութեամբ, անցեալով, քրիստոնէութեամբ:

Եւրոպական պետութիւնները միայն ֆիզիքական բուռնցքի ուժն են հաշուի առնում:

Աչքներս լաւ բանանք եւ չհաւատանք սոխակների դայալայներին»:

Յօդուածում Յակոբեանը երգիծանքի թեթեւ շղարշով նկարագրում է նաեւ Ջաքար Սուվարեանի ողիսականը: Իշխանութեան անբարեացակամ վերաբերմունքից յետոյ Ջաքարի ազգականներն ու բարեկամները խուսափում էին նրանից, Սուվարեանի գրպանի փոքրիկ ռատիօնդուռնիչը նրանք համարում էին սովետի պետական գաղտնիքները Ամերիկային հաղորդելու լրտեսական սարք: Միայն համազրկողացի մեծատարիք մի կին, տեսնելով, որ Ջաքարը ժամերով քայլում է դատարանի առաջ, հրաւիրում է տուն եւ հիւրասիրում: Եւ կնոջ միամիտ հարցին, թէ «Ամերիկայում էլ, արդեօք, ինչպէս մեզ մօտ, էշեր կա՞ն», Ջաքարը դառնացած պատասխանում է. «Էնտեղ մի էշ կար, վեր կացաւ եկաւ հաստեղ»:

Գիրքը եզրափակուած է Սոկրատ Խանեանի «Հայրուկային այսօր» քարի շեփոհարանը» յօդուածով, որտեղ հեղինակը անդադարձել է Իսահակեանի ֆիտայական պոեզիային, հայրուկային երգերին,



### ՈՒՐՈՒԿՈՒԿՅՈՒ ՅՄՍ-Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Ուրուկուայի ՀՄՄ-ի ֆուտբոլիստի խումբը

Ուրուկուայի մայրաքաղաք Մոնթեվիդեոյի Հայ Մարմնամարզական Միություն (ՀՄՄ) ֆուտբոլիստի խումբը աւարտելով իր տարեկան մասնակցութիւնը երկրի Համալսարանական Լիգայի մրցումներու, մէկ միաւորի տարբերութեամբ դարձաւ փոխախոյան: Այսպիսով Հայկական խումբը հնարաւորութիւն ստացաւ յաջորդ եղանակին մասնակցելու աւելի բարձր մակարդակի մրցաշարքին:

Զրուցելով «Արաքս» ռատիոյի թղթակցին հետ ՀՄՄ-ի երկու փայլուն ֆուտբոլիստներ Տիէկօ Կէնսճեան եւ Սերխիօ Քոճեան յայտնեցին իրենց ուրախութիւնը, նշելով որ մինչեւ վերջին պահը պայքարեցան արդիւնաւորութեան համար:

Այս առիթով Հնչակեան Կեդրոնէն ներս տեղի ունեցաւ ընդունելութիւն, որու ընթացքին մարզիկներուն շնորհաւորեցին Կուսակցութեան ղեկավարութիւնը, անդամներն ու համակիրները:

### ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՍ

#### Շարունակուած էջ 8-էն

դիր Աթոռոյ Սրբոյն Յակոբայ, եւ տարածամ մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս... որք հանդիպիք եւ ընթեռնուք լի բերանով յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք սմա...»:

Ներսս կ'աղմկէ, պատճառը յուզումն է: Կ'աղօթեմ առ Աստուած որ պահպանէ Ս. Աթոռը:

Իւրաքանչիւր միաբան, ըլլայ ան յաւակնտ կամ ոչ, պաշտօնին կոչուելէ առաջ, պէտք է կարգաւ աչք վարդապետին պատմութիւնը որ գուրած է իր շիրիմին վրայ եւ թերեւս՝ վախնայ:

Ով քաղմաշխատ վարդապետ, Հեռուներէ եկայիս Բու շիրիմին ուխտաւոր:

Այսպէս կրնանք բացայայտ խոստովանիլ որ ճշմարիտ հովիւին պարտքն ու կոչումը այս է, որ կրցաւ հայկական կանթեղը Ս. Փրկչի Գերեզմանին վրայ պահել: Այն կանթեղը որուն մէջ ինքը՝ հայը, Ս. Աթոռոյ միաբանը, լեցուցեր է իր արիւնը երբ հատեր է ձէթը, եւ չորցրեր՝ ձիթեմին:

Հովու ապետ բարի Փրկիչ աշխարհի Տուր սոցա տեղի Ի Բու մ'խորանի:

### ՎԱՐՊԵՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ, ՎԱՐՊԵՏԻ ՀԵՏ...

#### Շարունակուած էջ 16-էն

որոնք Վարպետի քնարերգութեանն ուրոյն հմայք են տալիս:

Նեմրոթա սարը հազար ակն ունի,

Հագարն էլ Սըշու դաշտն ի վար կ'երթայ.

Մեծակ Աղբիւրի աղբիւրը սրտի հեղձ ժողովրդի սրտի մէջ կ'երթայ,

Ազատ օրերի, դալար օրերի Ծարաւ վաթանի սրտի մէջ կ'երթայ...

Միաբանի երախտագիտութեան անխառն գզացումով կ'ամփոփեմ իմ խօսքս Օրմանեան պատրիարքի խորհրդածութեամբ. «Երուսաղէմի մէջ ընկերովի ստացութիւնները կը ստեղծեն երեք ծանր պարտաւորութիւններ. այսինքն ստացութեանց պահպանութեան, իրականաց պաշտպանութեան եւ պաշտամանց ճշտապահութեան: Երուսաղէմի Միաբանութիւնը այդ պարտքերուն համապատասխանելու համար կը ստիպուի անքուն տքնութեան, մշտամրմունջ աղօթասացութեան, արթուն հսկողութեան, ծախուց ընդարձակութեան, պայքարներու դիմադրութեան, անհատական հանգիստի զրկման եւ ուրիշ տեսակ տեսակ գոհողութեանց, եւ մինչեւ իսկ անձը վտանգի ենթարկելու:

«Ահա այն կէտերը որոնք միթարական են ազգային գզացմանց համար, եւ որոնց այնչափ հաւատարիմ են միաբանները, եւ որ ամէն նկատողութիւն, եւ ձգտում, հակառակութիւն ու գժտութիւն տեղի կու տան անոնց աչքին առջեւ՝ երբ որ այդ շահերն են որ գործունէութիւն կը պահանջեն»:

Այսպիսով է որ գոյատեւած է հայ Երուսաղէմը:

### ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

#### Շարունակուած էջ 8-էն

\*\*\*

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ մօտէն կը հետեւի Երուսաղէմի Սուրբ Աթոռի տաճնապալի իրավիճակին, շարունակ իր Հայրական յորդորներով, իր ծանրակշիռ մտահոգութիւնը յայտնած էր վանքի իշխանութեան: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը երկու Արքեպիսկոպոս առաքած էր Երուսաղէմ, Գերշ. Տ. Նաւասարդ Արք. Կճոյեան եւ Գերշ. Տ. Սիրոն Եպս. Աղամեան, որպէս զօրակցութիւն, որոնք վստահաբար մտահոգ վեհափառ Հայրապետին ողջունները եւ պատգամը փոխանցեցին Պատրիարքութեան:

Միաբանական Ընդհանուր Ժողովը, ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎԻ եւ Կրօնական Գերագոյն Ատենի իրենց պաշտօններէն ազատ արձակեց երեք անդամներ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեանը, Հոգշ. Տ. Աւետիս Վրդ. Իփրաճեանը եւ Տ. Նորայր Վրդ. Գազաբեանը, որոնց տեղ ընտրեց Հոգշ. Տ. Սամուէլ Մ. Վ. Աղոյեանը, Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեանը եւ Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեանը:

Հարկ եղած անհրաժեշտ փոփոխութիւնները զգալի են եւ անկասկած նոր յոյս կը ներշնչեն: Հարցերուն լուծման համար «մոգական գաւազան» գոյութիւն չունի: Ամէն ինչ կը կատարուի քննարկումով, լուծումներ որոնելով եւ մանաւանդ հետեւողական աշխատանքով:

Պատրիարքութեան բարեկարգութեան հիմնաքարը գետեղուեցաւ վերոյիշեալ ժողովին ձեռամբ՝ Ամեն. Պատրիարք Հօր: Այժմ, աշխատանքի ուղին բաց է միաբանութեան առջեւ եւ մեր բոլորին:

Հարկ է միանական ուժերով հոգեւորական եւ աշխարհական՝ համբերաշխօրէն համագործակցելով Ս. Յակոբայ Միաբանութեան Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի եւ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎԻ անդամներուն հետ, վերականգնել հեղինակութիւնը Պատրիարքութեան, որուն առաքելութիւնը մեծ է սփիւռքի մէջ, միշտ ի փառս Ամենակալին եւ մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի եւ ի պայծառացումն Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ:

### «ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ»

#### Շարունակուած էջ 13-էն

Ժարանի ուսուցիչներին կազմուած յանձնախումբը ուսումնասիրելուց յետոյ պէտք է որոշէր մրցանակները ըստ տեղեկութիւնների ճշգրտութեան, ստեղծագործական մօտեցման եւ աշխատանքը ձիշղ մատուցելու կարողութեան: Աշակերտները աքտիւօրէն պատասխանում էին հարցերին, իսկ շատերն էլ նոր տեղեկութիւններ էին ստանում իրենց աշխատանքները քննող ուսուցիչներին: Որախ ենք նշելու նաեւ, որ այդ օրը մեզ հետ էր ԹՄՄ Արշակ Տիգրանեան վարժարանի հոգաբարձական կազմի ատենապետ՝ Պրն. Ճորճ Մանտոսեանը: Նա ամենայն սիրով ստանձնեց աշխատանքները քննելու պարտականութիւնը: Գեղեցիկ աշխատանքների շարքը աւելի բարդացնում էր առա-

Մեր խօսքին մէջ ըսինք, թէ անհուն ուրախութիւնը ունինք, որ Երուսաղէմի Միաբանական Ընդհանուր Ժողովը վերջապէս կայացաւ:

Կասկած չունինք, որ սաղիմահայութիւնը, որ մինչ այդ՝ անյոյս եւ անմիթար կ'ողբար վանքի ներկայ իրավիճակը եւ կը տեսնէր անորոշ ապագան, այսօր նոյնքան ուրախ է ի տես կատարուած «տեղաշարժին»:

Որքան ուրախ ենք, որ Պատրիարք Հայրն անգամ ՕՐՈՒԱՆ ՊԱՀԱՆՋՔԸ նկատեց Աթոռակից Պատրիարքի Ընտրութիւնը, պատմական եւ ճակատագրական իր յանդուգն առաջարկով: Սակայն պատմութեան համար հարկ կը զգանք արձանագրել, որ գտնուեցան մարդիկ որոնք «ի վերայ տանեց եւ պատշգամաց» փոռահարեցին, թէ «Աթոռակից Պատրիարքի Ընտրութիւն չկայ... կարելի չէ այդպիսի բան ընել... կանոնադրութեան մէջ նախատեսութիւն չկայ անգամ... օրակարգին վրայ նոյնիսկ պիտի չգայ Աթոռակիցի հարցը»:

Այո, հոգեւորական մարդիկ, միաբաններ, որոնք գոհ էին ներկայ տիրուր իրավիճակէն, ափսոս... որ չունեցան ողջմտութիւնն ու իմաստութիւնը, լայնախոհութեամբ մօտենալու այս յոյժ կարեւոր հարցին, մանաւանդ ի տես ստեղծուած հանրային կարծիքին, ինչպէս մօտեցաւ Ամենապատիւ Պատրիարք Հայրը:

Վանքի տիրուր իրավիճակի հանդիսատեսներն անգամ, որոնք երէկ անաղմուկ կը քալէին պատրիարքութեան դիմագրաւած ցաւերուն վրայէն, այսօր, Միաբանական Ժողովէն հետք, հրապարակ իջած են ողջունելով եւ փողահարելով Աթոռակից Պատրիարքի Ընտրութիւնը:

Ուրախ ենք, որ այսօր համախոհ ձայնակիցներ ալ կ'ունենանք մեր բեմին վրայ երգող, թէպէտ... ո՛ւշ: Բայց, ինչ փոյթ... այդպէս եղած է պատմութեան ընթացքը, տեսիլքէ պարպուած մարդոց, որոնք ՕՐՈՒԱՆ ՊԱՀԱՆՋՔԻՆ հետ քայլ պահելու դժուարութիւնը ունին, սակայն ղէպքերէն հետք բեմահարթակ կը շտապեն, իրենց «առագաստը» պարզելու:

Չին երկրորդ եւ երրորդ մրցանակների որոշումը: Երկար քննարկումից յետոյ, ուսուցչական յանձնախումբի որոշմամբ, Լիլիթ Շիրիկեանի աշխատանքը ստացաւ առաջին մրցանակը, Ալեքս Քասշիկեանի, Ռիթա Կարայեանի, Լիաննա Սուլթանեանի աշխատանքները ստացան երկրորդ մրցանակը, իսկ Թազաւիթեան Ազատուհին եւ Քալաջեան Շաքէն շահեցին երրորդ մրցանակը:

Ակնյայտ էր, որ նմանատիպ աշխատանքները աւելի ոգեւորում եւ արթնացնում են աշակերտների մէջ մրցակցութեան եւ առաջնայինը լինելու եռանդը: Իսկ աշխատանքների անբաժանելի մասը տիգրանեանցիների երեւակայութիւնն էր եւ քրիստոնեայ Հայաստանի ինքնատիպ մեկնաբանութիւնն ու արտացոլումը աշխատանքներում:

խօսք, հայերէն աղօթք ու երգ... Եւ այդ երգերի մէջ իր մշտական տեղն ունի Իսահակեանի ստեղծածը...

ճող Շուշին, նորոգուած եկեղեցին, գեղեցիկ շէնքերն ու մաքուր փողոցները, կը լսի միայն հայերէն

### ՆՈՐ ՏԱՐԻ Է, ՆՈՐ ՏԱՐԻ...

Շարունակում է 7-էն

ծննդեան մեղեդիներ, մէկը միւսից գեղեցիկ, ականջ շոյոյ: Աւելին. ամբողջ մէկ ամիս FM1 կայանը 103. արիքով, օրը քսանչորս ժամ եթեր է փռում ծննդեան մեղեդիներ, երգեր՝ տարբեր մշակումներով, միեւնոյն երգի տարբեր կատարումներ՝ մեներգիչներին, երգչախմբերի կամ նուագախմբերի կատարմամբ:

Եւ այս ամէնը այնպիսի խանդավառութեամբ ու վարպետութեամբ է մատուցւում, որ մնում են ապշած, զարմացած, ու ինքը քեզ հարց ես տալիս. ի՞նչն է մղում այս մարդկանց նման նուիրագործումներ իրականացնելու, սովորովի ո՞ւժով, թէ՛ հաւատով՝ Աստուծոյ, երկրի, օրէնքի, սահմանադրութեան հանդէպ:

Ամէն դէպքում, ինչ էլ որ անում են, անում են՝ սիրով, նուիրութեամբ, տարիների ընթացքում մշտապէս թարմացնելով երեւոյթները բաղադրատարրերը:

... Նոր տարի, նոր սպասելիքներ, նոր երազներ, յուզումներ բազում, առայժմ ճեղքուած մի ամբողջ ժողովուրդ, որ փոխանակ լցնելու այդ ճեղքը, կեանքի դժուարին պայմանների պատճառով: Ստիպուած է իր իսկ ձեռքով մեծացնել այդ ճեղքը:

Եկէք այնպէս անենք, որպէսզի 011-ին Սփիւռք-Հայրենիք կամուրջը չ'երեւայ Սփիւռքի կողմից Հայաստանին հասցուող նիւթական ու բարոյական «բեռի» ծանրութիւնից: Չէ՞ որ Սփիւռքն էլ իր կարիքներն ունի եւ ջանանք օգնել նաեւ մեզ՝ Սփիւռքին, մեր Լոս Անճելըսի մշակութային ու բարեսիրական միութիւններին, դպրոցներին, եկեղեցիներին:

Այս մտավախութիւնը շատերիս է համակել, ու պատահական չէ Պարոյր Աղպաշեանի չափազանց այժմէական ու մտահոգիչ յօդուածը (Նոր Օր, Դեկտեմբեր, «Սփիւռքիւր եւս պէ՛տք ունի «ԹՈՆ»երու (Ռատիօ, Թելի, Թի.Վի.), որի մէջ սրտի ցաւով է նա նկատում հետեւեալը. «Ինչո՞ւ Սփիւռքի համար չի կազմակերպուիր կամ չի նախաձեռնուիր ԴՐԱ-ՄԱՀԱԻԱՔԻ համապատասխան արշաւ մը... Այսօր, աւելի քան ցաւալի է, որ նիւթական դժուարութիւններու պատճառով, դպրոցներ կ'ապրին սուրբ տաղնապներ, ուսուցիչներ կը մնան անվճար կամ անգործ հացուցիչ պայմաններու տակ»:

- Անկասկած, այո՛, պէտք է օգնել հայրենիքին, մեր քոյրերին ու եղբայներին, սակայն ոչ Սփիւռքի ուժերը ջլատելու հաշուին: Ես դեռ տարիներ առաջ եմ հանդէս եկել մամուլում եւ ասել «Զօրաց-

նել Սփիւռքը՝ ի շահ Հայաստանի»: Հիանալի վերջաբանով է վերջացնում իր յօդուածը Պարոյր Աղպաշեանը, որի հետ լիովին կիսում ենք իր մտահոգութիւնները: Ահա այդ պարբերութիւնը:

- Այո՛, Արցախը կամ Հայաստանը ՁՈՒՐԻ պէտք ունի: Վիճելի չէ: Բայց ո՞վ ըսաւ թէ՛ Սփիւռքը ուրիշ տեսակ «Չուրերու» պէտք չունի:

Պէջրութեամբ մտաւորականի եզրայանգումը մի տեսակ կոչ է, անհազանգ մեզ՝ հայաստանցի սփիւռքահայերիս համար: Մենք՝ արտագաղթած հայերս հիմնականում անտեղեակ ենք Սփիւռքի կառույցների գործունէութիւնից: Շատեր, նոյնիսկ տասնամեակներ շարունակ ապրելով Սփիւռքում, բնաւ պատկերացում չունեն, թ ինչպէս են գոյատեւում մի քանի տասնեակ հայրենասիրական, բարեսիրական, մշակութային միութիւնները, ֆինանսական ինչպիսի՞ միջոցների շնորհիւ են կարողանում երկար տարիներ գոյատեւել:

Ոչ միայն հայկական, այլեւ ամերիկեան հազարաւոր միութիւններ: Իրենց գոյութիւնը պահպանում են հիմնականում նուիրատուութիւնների շնորհիւ: Եւ, որովհետեւ, նախկին հայաստանցի վարժուած չէ նման մի երեւոյթի, իր համար դժուար է ըմբռնել այս ամէնը:

Նա (հայաստանցին) նուիրող է, տուող է, բայց հիմնականում ոչ Սփիւռքի կառույցների համար: Նա հայաստանի բարօրութեան, այնտեղ բնակուող հարազատների եւ բարեկամների համար ոչինչ չի խնայի: Նա դեռ լիովին չի պատկերացնում, որ Հայաստանին օգնելու հետ մէկտեղ, հայ մնալու եւ գաւազներին ճշմարիտ հայ մեծացնելու համար անհրաժեշտ է օգնել նաեւ մեր՝ ներքին կառույցներին:

Շատ է պատահել, երբ ինձ գանգահարել են ու հարցրել՝ «Ձեր երգչախմբում երգելը վճարովի է...»: Ի՞նչ ասես. մարդը գաղափար չունի ինչ ասել է «ճրիբար» երգելը, որովհետեւ Խորհրդային Միութիւնում ամէն ինչի համար վճարում էին: Նա դեռ էն հիւն օրերի յուշերի մէջ է ննջում...:

Այս թեմայի մասին կարելի է երկար խօսել ու գրել: Նոր տարուայ նախօրեակին չեմ ուզում մոռալ մտքերով ծանրաբեռնել ձեր ուղեղը:

Պարզապէս, եկէք իրար ասենք Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ: Բայց մինչ այդ, քանի որ ապրում ենք այս հիւրընկալ երկրում, մինչ մեր Սուրբ Ծննդեան օրը (Յունուար 6) պարտաւոր ենք նաեւ ասել Merry Christams:

### ՀԱՆԴԻՍԱԻՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ, ՁԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ Ս. ԿՈՆԴԱԿԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Շարունակում է 13-էն

Լորական խօսքերն ու բարի մաղթանքները:

Ապա Ս. Յակոբ եկեղեցուց Կիրակնօրեայ վարժարանի աշակերտներու նուագախումբը հրամցուց «Սուրբ Աստուած», «Քրիստոսի մէջ» եւ «Մեր Հայրենիք», որմէ ետք երիտասարդ արուեստագիտուհի Թալին Գուլումեան գեղեցիկ կերպով դաշնակի վրայ նուագեց Թիէրսընէն, Պեթովէնէն եւ Մօցարթէն ստեղծագործական բաժիններ:

Սարի Բէշիշեան յաջորդաբար ասմունքեց Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական», Արամայիս Սահակեանի «Հայաստան» եւ Գէորգ Էմինի «Սասունցիներու պարը» ստեղծագործութիւնները: Վերջին՝ Գագիկ Պատալեան մեներգեց «Դու ինձ համար», «Անուշ Հայաստան», « Ի գէն հայեր», «Ես քեզ համար» եւ «Հայոց սարեր» երգերը, մեծ խանդավառութիւն ստեղծելով սրահէն ներս:

Իր կարգին սրբազան հայրը մէկական յուշանուէրներով գնահատեց գեղարուեստական յայտագրի մասնակիցները:

Յանուն Միակն խորհուրդի ատենապետ բշ. տք. Սարգիս Մեսրոպեան երկրեզու նախ շեշտեց, թէ սրահը իր հոծ ներկայութեամբ արդէն պատմական դարձուցած էր օրը:

«Մեր ուրախութիւնը կը կրկնապատկուի, երբ հրապարակային կերպով կը մեծարենք եկեղեցուց հաւատացեալներէն երեք անդամներ, յանձինս Լօրա Գուլումեանին, բրշ. ձօրթ Գիգիբեանին եւ Փիթըր Ապաճեանին, որոնք տարիներէ ի վեր իրենց կեանքը անսակարկ զոհաբերութեան ի սպաս դրած են հայ եկեղեցուց եւ յատկապէս Ս. Յակոբին ու անոր հայ վարժարանին եւ Հայաստանեայց եկեղեցուց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմին ծառայութեան եւ բարգաւաճման»:

Ապա ատենապետ Մեսրոպեան յայտնեց նաեւ թէ ուրախալի երեւոյթ է, որ այսօր այս տօնական օրուան առթիւ եկեղեցուց դպրոց դասին կը միանան 9 նորագիրներ եւ նոր պաշտօններ ստանձնողներ:

Ապա այս յայտարարեց, թէ այս ուրախ առիթով Ս. Պետրոս եկեղեցուց «Կոմիտաս» երգչախումբը \$400, իսկ եկեղեցուց բարերարներէն՝ Արտօ Գալպեան \$1000 կը նուիրեն Ան շնորհակալութեան եւ երախտագիտական խօսեքերէն ետք կրկին անգամ շնորհաւորեց նոր պարգեւատրեալները, եկեղեցուց նոր դպիրները, օրուան ձեռնարկին հանդիսավարն ու մանաւանդ Ս. Յակոբ եկեղեցուց տարիներու հոգեւոր հովիւր ու նաեւ անսակարկ սպասարկողներէն՝ Պապ Մելքոնն ու Պապ Պարսամը, վեր առնելով անոնց Հայաստանեայց եկեղեցուց հանդէպ ունեցած օրինակելի ծառայասիրութիւնը:

Իր կարգին, հայրական խօսքերով առաջնորդ սրբազան հայրը երկրեզու կրկին անգամ օրհնեց օրուան մեծ պարգեւատրեալները եւ անդրադարձաւ մեր դարերու հաւատքին ու միաժամանակ մեր պարտասխանատուութիւններուն մասին:

Ապա Արեւմտեան Թեմի առաջնորդարանի «Հայ Ոգի» շքանշանով պարգեւատրելու համար բեմ հրաւիրուեցան երեք թեկնածուները:

Ներկայացնելով Լօրա Գուլումեանը սրբազան հայրը շեշտեց անոր տարիներու բացառիկ առաքելութիւնը մեր նոր սերունդի հայցի դաստիարակութեան մարզէն ներս: Սարկաւազ ձօրճ Գիգիբեանի մասին առաջնորդը դրսեւորեց անոր խոնարհ ծառայութիւնը հայ եկեղեցուց մէջ, իսկ Փիթըր Ապաճեանին համար Յովնան սրբազան մեծարեց անոր երկար տարիներու նուիրումը թէ հայրենիքին եւ թէ իր գաղութին:

«Հայ Ոգի» շքանշաններ յանձնելէ ետք սրբազան հայրը շեշտեց մարդոց նուիրումով իրենց կեանքը հարստացնելու բաժինը: Տօները մեր եկեղեցուց մէջ վերացական են եթէ չկայ մարդու ծառայութիւնը: Դուք երեքդ ալ արժանի մեր սիրոյն աղօթքին եւ յարգանքին»:

Իր խօսքի աւարտին սրբազան հայրը շնորհաւորեց ու օրհնեց ներկաները, ծխական խորհուրդի անդամները եկեղեցուց տարիներու հոգեւոր հովիւն ու դպրաց դասին բոլոր ծառայողները, տիկնանց ու եկեղեցուց յարակից այլ միութեան ու մարմիններու անդամները ու յատկապէս Թէճիրեան ընտանիքը, որոնց համար օրը դարձած էր եկեղեցուց անուանակոչման նման պատմական:

Ատենապետ Մեսրոպեան եկեղեցուց յարակից մարմիններու պատասխանատուները ծանօթացուց ներկաներուն եւ բացառապէս այդ մարմիններուն եկեղեցուց յատուկ տարեկան նիւթական օժանդակութիւններուն բաժինները:

Իր կարգին հոգեւոր հովիւ Արշակ քնյ. խաչատուրեան բարի յիշեց Միակն խորհուրդի անդամներն ու եկեղեցուց բարգաւաճման սպասարկող հաւատացեալները վեր առնելով անոնց օրինակելի աշխատանքը, ի փառս եկեղեցուց: Նոյնպէս ջատագովեց թեմիս առաջնորդն ու Միակն խորհուրդի ժրջան ատենապետը, եւ ապա սրտանց շնորհաւորեց նոր պարգեւատրեալ ձան Թէճիրեանն եւ գնահատանքի խօսքեր ուղղեց եկեղեցուց բոլոր սպասարկուներուն եւ յատկապէս նոր ձեռնադրուողներուն:

Ս. Յակոբ Հայց. Առաքելական եկեղեցուց 68-րդ պատմական տարեդարձը սրբազան հօր պահպանիչով փակուեցաւ:

Պրօֆակցուքիւնը՝ Ս. Յակոբ եկեղեցիէն

### ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Ուրախութեամբ իմացանք, որ թերթիս բաժանորդ բարեկամներէն Տէր եւ Տիկ. Էտի եւ Գլարա Գոնյայեան, Հոկտեմբեր 21, 2010ին բախտաւորուած են առաջնեկ աղջիկ գաւակով մը, զոր անուանակոչած են Գալին:

Նաեւ, հոգեկան հաճոյքով վերահասու դարձանք, որ նոյնպէս թերթիս բաժանորդ բարեկամներէն Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անիթա Թիւթիւնճեաններ, ընթացիկ տարուան Դեկտեմբեր 25ին, բախտաւորուած են առաջնեկ մանչ գաւակով մը, զոր անուանակոչած են Անթընի:

Այս գոյգ ծնունդներով բախտաւորուելուն բարեբաատիկ առիթներով, «Մասիս» կը շնորհաւորէ նորածիններուն ծնողները եւ մասնաւորաբար անոնց մեծ հայրն ու մայրը՝ Տէր եւ Տիկ. Տիրան եւ Մարգրիտ ձէրէճեանները, բոլորին մաղթելով ամենայն բարիք:

### ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ԷՅՕԺԵՆԻ ձէՐԷՃԵԱՆ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Հէրի եւ Արշօ Տիրամարեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի գաւակներուն, քրոջ եւ ձէրէճեան ընտանիքի համայն պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի 100 տոկար կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

# «ԿԸ ԳԱՅ ՕՐԸ, ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԷԼ ԿԸ ՔՆՆԱՐԿՈՒԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ»

Շարունակում է 5-էն

դժուարանար:

Հայաստանի հետ մեր յարաբերությունները պետք է նախաձեռնել իրական գարգացումների հիմքի վրայ: Կովկասում խաղաղությունը եւ կայունությունը ամրապնդելու, Ղարաբաղի հարցի կարգաւորումը արագացնելու համար պետք է շտապ կեանքի կոչել նախորդ տարի ստորագրուած արձանագրութիւնները: Թէ ԱՄՆ Կոնգրէսի անդամները, թէ հայ եւ թուրք առաջնորդները չպետք է քաղաքականութեան մէջ գործիք դարձնեն մեր ոչ հեռու պատմութեան ամենամեծ բիծը հանդիսացող հայկական ողբերգութիւնը: Այս համատեքստում գովելի է թուրքական հասարակական կազմակերպութիւնների գործունէութիւնը:

Թիւրք: Օսման Քաւալայի դեկավարութեամբ Anadolu Kultur, TESEV, Hrant Dink հիմնադրամները հայ եւ թուրք հասարակութիւնների միջեւ առկայ նախապաշարունակները կոտորելու եւ բարեկամութեան կամուրջ ստեղծելու համար արտակարգ ջանքեր են գործադրում:

Հալիլ Բերքթայը, Ֆիքրէթ Ադանըրը, Թանէր Աքչամը եւ Այլէ Հիւրի պէս պատմաբանները, որոնց թիւը գնալով շատանում է, իրենց կեանքը վտանգի ենթարկելով 1915-ի վերաբերեալ բացում են մեր աչքերն ու գիտակցութիւնը, վերձանում տասնեակ տարիներ մեզ հրամցուած ստերը: Կը գայ օրը՝ այս հարցը թուրք-իւրի խորհրդարանի հարկի տակ էլ կը քննարկուի: Խիղճը կը խօսի:»,-եզրափակել է Ամբերին Չամանը:

## ԵՐԹԸ

Շարունակում է 15-էն

որոնց հազուադիւր առիթներով կրնայի հանդիպել, մեր միջեւ եղած հեռուութեան պատճառով: Երբ ապրուստի սիրոյն 1926-ին որոշեցին Պրազիլ գաղթել՝ կարօտս աչրեց զիս:

Մինչեւ տասնհինգ տարեկանս ուսումս շարունակեցի վարժարանիս մէջ, երբ հայրս յանկարծակիի բերաւ զիս՝ դժգոհելով իր նիւթական անկումային վիճակէն եւ խիստ կարիքը ունենալով օգնականի՝ յարդի եւ գարիի գնումները ուղղակիօրէն գիւղացիներէն կատարելու առանց միջնորդի, որ ծախսերը կ'աւելցնէր:

Անդրանիկ գաւակ ըլլալով, ոչ բառը արտասանելը ճիշդ չէր հօր մը հանդէպ, որ կը չարչարուէր ու կը տառապէր: Հասեր էի վստահութիւն ներշնչելու հանգրուանին:

Այսպէս մոռտք գործեցի կեանքի ասպարէզ, ընտանիքը պահելու հօրս օգնականը դառնալով:

Հօրեղբայրներէս մէկը Ջահէի մօտ թաւալպայա գիւղը ապրիլ նախընտրեց, ուր խանութ մը բացաւ հնտեղէնի եւ պտուղներու:

Պեքայի շրջանին մէջ եղող տունը առիթ ընծայեց, որպէսզի իր մօտ մնամ եւ գործս կատարեմ այն հեծանիւով, որ հայրս գնած էր գարին եւ յարդը բաժնելու: Յաճախորդներուն կ'այցելէի յաջորդաբար, անոնց անհրաժեշտ ապրանքները ապահովելու եւ գումարները գանձելու: Հայրս շարունակեց անասակները պարտքով տալ, նաեւ ֆրանսական բանակին ու Յիսուսեան հայրերուն անասուններուն կերը ապահովել:

Պեքայի Շիթորա քաղաքը երթալու համար, գիշերով շոգեկառքը կը նստէի Սաստնայէի կայարանը ուղղուելով, ուր անկիւն մը կեցուցած հեծիքս կ'առնէի եւ մութին մէջ քշելով հօրեղբօրս տունը կ'երթայի: Այդ տարածութիւնը հին արահետէ մը կտրելով կ'անցնէի, կողքի գերեզմանները հոգիիս մէջ սարսափ կը ստեղծէին, գայլերու ոռնոցին եւ վայրի շուներու հաչոցին հետ, որոնք երբեմն կը հարածէին զիս՝ արագացնելով սրտիս գարկերը վախի տրոփիւններով, անոնցմէ հեռանալէ ետք ոտքերս հովուն կ'արձակէի, գոհաբանական համարներ կրկնելով՝ ողջ ու անվնաս

հասնելուս համար:

Տառապանքներէս յետոյ զիս հանգստացնող մրափ մը առնելով, արշալոյսին առաջին ժամերուն հետ կ'արթննայի, դասաւորելու գործերս ու գիւղ վերադառնալու, գիւղացիներէն գարի եւ յարդ գնելու եւ ծախուածներուն գումարը գանձելու:

Սարսափի զգացումս փարատելու եւ հոգիս հանգստացնելու համար, գիշերները կրտսեր եղբայրս հետս կ'առնէի որպէս ընկերակից, հեծանիւի ետեւի աթոռին վրայ կը նստեցնէի զինք եւ ան զիս բռնած ճամբայ կ'ըլլէի:

Անգամ մը վերադարձին, քունը դաւաճանեց զինք եւ ինձմէ փրթելով ինկաւ: Ետեւ դարձայ, տեսայ, որ գետին փռուած էր:

Վերադարձայ իր մօտ, գանգատելով կ'անիծէր.

- Այսպէ՞ս պէտք է չարչարուիք եւ աշխատինք մինչեւ գիշերուան այս ուշ ժամերուն:

Օրեր ու գիշերներ անցան կամաց-կամաց. հմտօրէն կը կատարէի ինձի տրուած պարտականութիւնները: Արդէն տասնութ տարեկանի սեմին ոտք դրած էի, երբ փորձառութիւն եւ ճարտարութիւն ձեռք բերի:

Ֆրանսական բանակը ձիեր ու անասուններ կ'օգտագործէր եւ սովորաբար անասակները աճուրդով կը գնէր:

Ինքնիրենս ըսի, ինչո՞ւ բախտս չփորձեմ, մասնաւորաբար երբ գնումները մեծ քանակութեամբ կ'ըլլային եւ շահը կը կրկն ապատկուէր:

Երկու օրեր ետք որոշեցի ֆրանսական բանակին կայացուցած աճուրդին մասնակցիլ՝ հակառակ այս ասպարէզին մէջ անփորձութեանս, փոքր տարիքիս պատճառով: Բաց ծանօթ վաճառական Միսաք էֆենտի Ազիրեանը, օգնութեան ձեռք երկարեց ինձի՝ առիթ տալով իր մօտ աշխատելու, յարդ եւ գարի ամբարելու վայր մը գտնելու, ինչպէս նաեւ մեծ վաճառականներու հետ գործելու սկզբունքները սորվեցնող յարմար անձին գոյութիւնը՝ մտահոգութիւններս փարատեցին:

Գիշեր-ցերեկ առանց դադարի կ'աշխատէի, անկողինս կը մտնէի ու ժասպառ, մինչ առիւծի բաժինը վաճառականներուն կը մնար:

# ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳԻՐԲ

Շարունակում է 5-էն

տիկս երկար էր մահանում Նա բացում էր աչքերն ու ասում, որ տանջուած է ճանապարհին թողած երեխայի համար»:

Իսկ թուրք հեղինակը գրքի իր հատուածի համար վերնագիր է ընտրել մի թուրք երիտասարդի խօսքերը՝ «ափսոս նրանք չմնացին»:

Սա 1960-ականների սկզբին կենտրոնական Անատոլիայի Ակչեհիր քաղաքի դպրոցի աշակերտ Քամալի պատմութիւնն է:

Նրանք որոշել են լքուած եկեղեցում թատրոն բացել: Սկսել են մաքրել տարիներով հաւաքուած փոշին: Ինչ-որ մէկը խողովակով ջրի շիթը ուղղել է պատերի վրայ, ու եկեղեցու պատերին որմնանկարներ են յայտնուել, որոնք չէին երեւում, քանի որ եկեղեցու պատերը սպիտակեցուած էին, որպէսզի ոչ մէկը չիմանայ, որ այնտեղ հայեր են ապրել: Քամալն ուրախացել է որմնանկարները վերագտնելու համար, որ արուել էին մարդկանց կողմից, որոնց մասին մանկութիւնից նա արհամարհական «գիւղուր» բառը գիտէր, ու փոխարէնը շատ է տիրել, որ եկեղեցու պատերը սպիտակեցուել են:

Գրքի հայկական մասը թրքերէն թարգմանել է ստամպուլահայ Ալին Օզինեանը:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրաւոր հարցազրոյցում՝ Facebook-ով Ալին Օզինեանն ասաց, թէ իրեն խորապէս հետաքրքրել են այս ուսումնասիրութիւնները՝ որպէս համեմատաբար նոր խօսք Հայաստանի եւ թուրքիայի պատմութեան ծալքերը բացայայտելու ասպարէզով: Պատմողները այս իրադարձութիւններին անմիջականօրէն չեն մասնակցել, սակայն դրանք պահպանուել են իրենց ընտանիքների պատմութիւններում: Ալին Օզինեանը ասաց, որ

նման պատմութիւններ կային նաեւ իրենց ընտանիքում, ու հետագոտութեան թարգմանութիւնը իր համար ունէր նաեւ անմիջական նշանակութիւն:

Նա նշեց, որ գիրքը հասցեագրուած է Հայաստանում եւ թուրքիայում բնակուող կոնկրետ մարդկանց, որոնք կարծես մինչեւ այժմ դուրս են մնացել հայ-թրքական յարաբերութիւններով զբաղուող հետազոտողների, քաղաքական գործիչների ու շարժումների: Ե՛ւ հայ, ե՛ւ թուրք հասարակութիւններում անցեալը մեծ ճնշում ունի ներկայի վրայ, եւ առանձնապատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում, թէ ինչպէս է այդ անցեալն ընկալուած անհատների կողմից:

Ալին Օզինեանը նաեւ նշեց, որ անհատական պատմութիւնները կողք-կողքի մի գրքում ընդգրկելը ե՛ւ թուրքիայում, ե՛ւ Հայաստանում մարդկանց միմեանց հետ շփուելու եզակի հնարաւորութիւն է տալիս:

Այս գրքի մասին Կիրակի օրը գրել եւ գրքից հատուածներ է ներկայացրել թրքական «Չաման» թերթը: Ալին Օզինեանը «Չաման»-ին ասել է. - «Բանաւոր պատմութիւնները երեւի ամենաուսումնասիրելի ճանապարհն են պատմութիւնը պահպանելու համար: Այս պատմութիւնները շատ տպաւորիչ են»: Նա նաեւ ասել է, որ գիրքը կ'օգնի մարդկանց աւելի շատ պատմութիւններ պատմել, որոնք նրանք սովորաբար թաքցնում են:

Գրքում նաեւ նշուած է, որ հիմա հայերը կարողանում են այցելել թուրքիա. - «Մարդիկ գնում են եւ փնտրում իրենց նախնիների գիւղերը: Երբեմն նաեւ տները, որտեղ ապրել են իրենց նախնիները: Կարեւոր վայրերի՝ գերեզմանոցների, եկեղեցիների, սրբապալարերի, ծառերի, անտառների մասին պատմել են նրանց պապերը»:

Փոխարէնը քանի մը դրուշներ հագիւափս կը շօշափէին. այս եղելութիւնը վիճակիս դէմ ըմբոստանալու եւ անհատական գործի ուղղութեամբ ընթանալու մղեց զիս, առաջին

քայլը առնելու դէպի վաճառականութեան լայն հորիզոնները, գործելով իմաստալից առածին սկզբունքով. «Հազար մղոնի երթը առաջին քայլէն կը սկսի»:

**REQUEST FOR PROPOSAL**  
**RFP NO. 7542 PROJECT BASED VOUCHER NOTICE OF FUNDING AVAILABILITY (PBV NOFA)**

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified developers under the Project Based Voucher Program for Permanent Supportive Housing projects that serve extremely and very low income chronically homeless special needs individuals and homeless families, transition aged youth (TAY), seniors and the disabled. Copies of the PBV NOFA may be obtained beginning December 21, 2010 online at [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps). Proposals will be accepted until 2:00pm, January 21, 2011.

12/30, 1/6/11  
 CNS-2011795#  
 MASSIS WEEKLY

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ԸՆՈՒԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

### ՍՓԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՍՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ՏԱՐԻՆ

Շարունակում է 14-էն

Թեթը: ՀՀ կառավարութիւնը 21.10.2010 թ. թիւ 1366 որոշմամբ համաձայնութիւն է տուել վերոնշեալ Համաձայնագիրը ստորագրելու Սփիւռքի նախարարութեան առաջարկութեանը:

Նիժնի Նովորոդի Լոբաչեւսկու անուան պետական համալսարանի միջազգային չարաբերութիւնների ֆակուլտետում 2010-2011 ուսումնական տարում հայոց լեզուն ներառուել է պարտադիր ուսուցման օտար լեզուների ցանկում որպէս երկրորդ օտար լեզու: ՌԴ Նիժնի Նովորոդի հայ համայնքի նախաձեռնութեամբ Հոկտեմբերի 9-16-ը կազմակերպուել է Լոբաչեւսկու անուան համալսարանի պատուիրակութեան այցը Հայաստան: Մշակուել է այցի ծրագիրը եւ իրականացուել ծրագրով նախատեսուած բոլոր միջոցառումները:

ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հետ Մոսկուայում բացուել է «Միջբաղաբարկրթական հետազոտութիւնների կենտրոն», իսկ Եկատերինբուրգի պետական համալսարանում ԵՊՀ-ի սոցիոլոգիայի ամպիոնի հետ ստեղծուել է հայկական հետազոտութիւնների կենտրոն:

Կազմակերպուել են տեսակոնֆերանսներ Մոսկուայի հայկական երիտասարդական կազմակերպութիւնների, Եկատերինբուրգի հայ համայնքի եւ Ուրալի համալսարանի հայկական հետազոտութիւնների կենտրոնի ներկայացուցիչների, Ուքրաինայի հայերի միութեան եւ Քիեւի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնց արդիւնքում յստակեցուել եւ արձանագրուել են տեղի հայ համայնքների հիմնախնդիրներն ու դժուարութիւնները, դրանց ուղղութեամբ մշակուել եւ իրականացուել են միջոցառումների ծրագրեր:

2010 թ. Սեպտեմբերի 25-ին

«Վոլոգդրատի մարզի հայ համայնք» հասարակական կազմակերպութեան նախաձեռնութեամբ Չերեպովեցում բացուել է Հայկական կրթամշակութային կենտրոն: Ապահովուել է Մինգապուրում անցկացուած պատանեկան օլիմպիական առաջին խաղերի Հայաստանից մեկնած պատուիրակութեան ընդունելութիւնը տեղի համայնքի կողմից, ինչի համար Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէի ղեկավարութիւնը շնորհակալական նամակ է հղել ՀՀ Սփիւռքի նախարարութեանը:

Նոյեմբերի 21-ին Կրասնոդարի Պաշտպանութեան օժուեց ու բացուեց նորակառուց, տուֆակերտ Հայկական Առաքելական «Սուրբ Սահակ եւ Մաշտոց» եկեղեցին:

Բլազովեչչենսկում, Իգիումում, Սումիում, Տվերում, Մերեֆայում, Ազգաբատում, Մառիյում, Թուրքմենբաշիում, Էլոտանում բացուել են կիրակնօրեայ դպրոցներ:

Իրականացուել է ՀՀ կառավարութեան կողմից հաստատուած «Վրաստանի հայ համայնքի գործունէութեանն աջակցութեան» ծրագիրը:

ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից կառավարութեան է ներկայացուել 2 օրէնքի նախագիծ եւ 18 որոշում:

2010 թ. առաջին 11 ամիսների ընթացքում կազմակերպուել է ՀՀ սփիւռքի նախարարին կից ասեանի 11 նիստ, որոնց ընթացքում քննարկուել է 42 հարց:

ՀՀ սփիւռքի նախարարութեանում այս ժամանակամիջոցում ստացուել է 3413 եւ առաքուել է 3329 գրուել: Ստացուել եւ պատասխանուել է 745 նամակ քաղաքացիներից:

ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի ստորաբաժանումներում քննարկման արդիւնքում համապատասխան յանձ-

նարարականներով գերատեսչութիւններ, նախարարութիւններ եւ պետական այլ կառույցներ են առաքուել 2776 գրուել:

2010 թ. առաքուել է 304 շնորհակալական նամակ, ստացուել 102-ը, առաքուել է 913 շնորհակալական նամակ եւ ստացուել 1123-ը:

Նախարարութիւն է այցելել 1601 քաղաքացի, որից՝ նախարարը ընդունել է՝ 756, համապատասխան ստորաբաժանումները՝ 845: Նրանցից՝ ՀՀ քաղաքացիներ - 678 եւ սփիւռքահայեր - 923:

Կազմակերպուել է նախարարութեան կազմակերպած 26 միջոցառումների լայն լուսաբանում, որոնցից իւրաքանչիւրին մասնակցել է միջին հաշուով 18-20 տեղական եւ Սփիւռքի զանգուածային լրատուամիջոց: Կազմակերպուել է 9 մամուլի ասուլիս, որոնցից 7-ը՝ ՀՀ սփիւռքի նախարարի եւ 2-ը՝ նախարարի տեղակալի մասնակցութեամբ: Պատրաստուել է շուրջ 2000 տեղեկատուական նիւթ եւ էլեկտրոնային փոստով առաքուել տեղական եւ Սփիւռքի լրատուամիջոցներին:

Հայ լրագրողների 5-րդ համահայկական համաժողովի արդիւնքում ընդունուել է համաժողովի յայտարարութիւնը՝ համագործակցութեամբ ընդհանուր մօտեցում ունենալու, կազմուել է աշխատանքային համակարգող մարմին: Մշակուել է երիտասարդ լրագրողների վերապատրաստման դասընթացների եւ համաժողովի ծրագիրը:

Նախարարութեան ջանքերի շնորհիւ այսօր արդէն տեսակոնֆերանսների կազմակերպումը բարդ խնդրից վերածել է պարզ աշխատանքային գործունէութեան, կազմակերպուել է շուրջ 10 տեսակոնֆերանս: Նկարահանուել եւ տարբեր կայքերում տեղադրուել է նախարարութեան տարբեր ծրագրերի եւ գործունէութեան վերաբերեալ աւելի քան 30 տեսահոլովակ: Կատարուել է շուրջ 11 վեր-

լուծութիւն: Մշակուել է Սփիւռքի ներուժի հաշուառման եւ համախմբան մոդել եւ ծրագիր:

2011 թ. իրականացուելիք ծրագրեր՝

1. Մշակուել է «Սփիւռքի զարգացման հեռանկարները գլոբալացուող աշխարհում» միջազգային համաժողովի ծրագրի նախագիծը:

2. Մշակուել է «Հայոց ցեղասպանութեան զոհերի չիշատակին նուիրուած յուշարձանների մանրակերտերի պատրաստում եւ տեղադրում» ծրագրի նախագիծը, ըստ որի՝ արտերկրում գտնուող համապատասխան որոշ յուշարձանների մանրակերտեր տեղադրուելու են Միջնադարից յուշահամալիրի տարածքում:

3. Մշակուել է Սփիւռքի համայնքների եւ կազմակերպութիւնների ղեկավարների համահայկական համաժողովի կազմակերպման ծրագիր-ժամանակացուցը:

4. Մշակուել է ճարտարապետների եւ շինարար-ճարտարագետների համահայկական երկրորդ համաժողովի կազմակերպման ծրագիր-ժամանակացուցը:

5. Մշակուել է կիրառական հետազոտութիւնների թեմատիկ պատուէրի նախագիծ 2011 թ. համար:

2011 թ. առաջինի ծրագրերից առանձնանում են՝

1. «Հայկական սփիւռք-2011 տարեգրքի» հրատարակումը, որ կը լինի առաւել ընդգրկուել, լրամշակուած, կ'ընդլայնուի համայնքների եւ կառույցների աշխարհագրութիւնը:

2. «Հայկական սփիւռք վիրտուալ թանգարանի» ստեղծումը:

3. «Հայ բարերարների ճեմուղու» համալրման եւ բարեկարգման աշխատանքները:

4. Հայագիտական կենտրոնների նոր տեղեկանքների պատրաստումը:

5. Վիեննայի Միխիթարեան միաբանութեան 200-ամեակի տօնակատարութեան հետ կապուած:

## Vinyl Windows & Patio Doors

The LAST estimate you'll ever need!

### Our Windows Qualify For the \$1500 Federal Tax Credit

D.W.P. REBATES

Payments as low as **\$45<sup>00</sup>** per month!

Holiday Specials

8 Premium Vinyl Windows Installed For **\$ 2,995 \***

Our Success Depends on your Satisfaction

SHOW ROOM

located at 16735 Saticoy St. Van Nuys, Ca 91406

12 MONTHS NO PAYMENTS NO INTEREST SAME AS CASH (OAC)

Serving Los Angeles, Ventura, Orange, And San Bernardino Counties

AmericanReliableWindows.com

818 787-1101

Call Today!

Ask representative for details. Limited Time Offer

Licensed • Bonded • Insured  
Ca Lic. #901591